AZG NEW PDF.qxd 2/5/2010 11:28 PM Page 1

Ազգ
Azg
6 ՓԵՏՐՈՒԱՐ 2010 ՇԱԲԱԹ 20(4401)
ISSN: 1829-1651

# ԱՄՆ Կոնգրեսը Հայոց ցեղասպանության բանաձեւը կքննարկի մարտի 4-ին

**Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի պաշտոնական կայքէջի տեղեկացմամբ՝ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների տան արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանը որոշել է մարտի 4-ին քվեարկության դնել Հայոց ցեղասպանությունը դատապարտող 252-րդ բանաձեւը: Այդ կապակցությամբ երեկ ՀՅԴ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանը հանդիպել ու խորհրդակցություններ է անցկացրել հայերի ցեղասպանության ճանաչման գործընթացին սատարող մի շարք կոնգրեսականների, այդ թվում՝ բանաձեւի համահեղինակներ Ադամ Շիֆի, Ֆրենկ Փալոնի եւ Բրեդ Շերմանի հետ: Քեն Խաչիկյանը նշել է, որ նրանք նշանակալի քայլ են կատարում՝ Թուրքիային հասկացնելով, որ ԱՄՆ-ը մասնակից չի լինի Հայոց ցեղասպանության իրողությունը հերքելու բարոյազուրկ քաղաքականությանը:**

# Պատերազմ, թե՞ խաղաղություն

## *ԱՄՆ ազգային հետախուզության նետած «քարն» ու դրա հայկական արձագանքները*

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«Միայն քաղաքական միջոցները ու ձեւաչափերը կարող են լուծել որեւէ հակամարտություն, եւ ես դեռ չեմ կանխատեսում մոտ ապագայում լուրջ ռազմական հակամարտություններ, բացի մի տարածաշրջանից՝ Աֆղանստանից», տաջիկական «Երեկոյան Դուշանբե» շաբաթաթերթին տված հարցազրույցում հայտարարել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղար **Նիկոլայ Բորդյուժան** *(Տես՝ էջ 5)*:

Ըստ News.am կայքէջի մեջբերման, Բորդյուժան նշել է, որ հետխորհրդային տարածքում առաջնորդների մեծ մասն անձամբ է ծանոթ «թեժ կետերի» իրավիճակներին, հակամարտություններին, որոնք դեռ «մխում» են առանձին տարածաշրջաններում, եւ դա, իր կարծիքով, բավարար է ողջամիտ եւ ճիշտ որոշումներ կայացնելու համար:

Այս հայտարարությունը յուրօրինակ պատասխան է փետրվարի 2-ին ԱՄՆ Կոնգրեսում ներկայացրած իր զեկույցում ԱՄՆ ազգային հետախուզության տնօրեն, ծովակալ **Դենիս Բլերի** հայտարարության, թե չնայած նախորդ տարի Հայաստանի եւ Թուրքիայի մերձեցման հարցում արձանագրված առաջընթացին, այդ գործընթացն ազդել է Հայաստանի եւ Ադրբեջանի նուրբ հարաբերությունների վրա եւ բարձրացրել Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերսկսման ռիսկը:

Սա տեղիք տվեց տարբեր մեկնաբանությունների ու դատողությունների՝ պատերազմի վերսկսման հավանականության առնչությամբ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում: Եվ եթե Ադրբեջանում քաղաքագետ կամ ոչ քաղաքագետ, հետեւելով պետական քարոզչությանն ու մոտեցմանը, հայտարարում են, թե պատերազմը ընդունելի տարբերակ է ու սպասելի, այն էլ ադրբեջանական բանակի հաղթանակի ելքով, ապա հայկական կողմում կարծիքները, մեծ մասամբ տեսականորեն չբացառելով պատերազմի հավանականությունը, այնուամենայնիվ, չեն համաձայնում ԱՄՆ գնահատականներին:

*Տես էջ 3*

**ՄՈՍԿՎԱ**

# Ռուսաստանը շարունակելու է աջակցել Ղարաբաղի հարցի լուծմանը

## *Հայտարարել է Մեդվեդեւը նորանշանակ դեսպաններին ընդունելիս*

**Երեկ Կրեմլում, ընդունելով Ռուսաստանում հավատարմագրված նոր դեսպաններին, այդ թվում՝ Հայաստանի դեսպան Օլեգ Եսայանին, ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հայտարարել է, որ «Ռուսաստանը կոչ է անում բոլոր երկրներին հրաժարվել հակամարտողի պահվածքից եւ որդեգրել նոր՝ միասնական մոտեցումներ, այսօրվա հարցերը լուծելու համար»: Դիմելով ՀՀ նորանշանակ դեսպանին՝ Մեդվեդեւը ընդգծել է, որ Ռուսաստանը շարունակելու է աջակցել Ղարաբաղի հարցի լուծմանը. «Մենք պատրաստակամ ենք՝ օգնելու առաջ տանել այդ գործընթացը, եւ վստահ ենք, որ այն լիարժեք կամրապնդի խաղաղությունը Կովկասում», նշել է Մեդվեդեւը:**

**Ռուսաստանի նախագահը նաեւ ընդգծել է, որ Մոսկվան ամեն ինչ է անելու ԱՊՀ երկրների հնարավորինս ինտեգրացման համար:**

**Հ. Ա.**



*ՀՀ դեսպան Օլեգ Եսայանը հավատարմագիրն է հանձնում նախագահ Դմիտրի Մեդվեդեւին:*

# Մյունխենում Դավութօղլուն եւ Ալիեւը քննարկել են տարածաշրջանային հարցեր

Փետրվարի 5-ին Մյունխենում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հանդիպել է Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին: Դավութօղլուն ստացել է ղարաբաղյան բանակցությունների վերջին զարգացումների «ալիեւյան մատուցումները»: Կողմերը քննարկել են նաեւ տարածաշրջանային այլ հարցեր եւ գոհունակություն են հայտնել երկկողմ ջերմ հարաբերությունների մակարդակից:

Հավելենք նաեւ, որ փետրվարի 4-ին կայացել էր Ալիեւի հանդիպումը Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ; Այդ հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների համագործակցության հնարավորությունները էներգետիկայի եւ տնտեսական ոլորտներում:

Մյունխենում Ալիեւը պետք է հանդիպեր նաեւ ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Ջեյմս Սթայնբերգի հետ, որը, հիշեցնենք, Երեւանում արդեն հանդիպել է նախագահ Սարգսյանին:

**Հ. Ա.**

# Փետրվարին Վրաստանում A/H1N1 վիրուսով հիվանդանալու նոր ալիք է սպասվում

ԹԲԻԼԻՍԻ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 15-ից Վրաստանում սպասվող A/H1N1 վիրուսով հիվանդանալու նոր ալիքի կապակցությամբ այսօր երկրի առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության նախարարությունում տեղի է ունեցել առողջապահության նախարար Ալեքսանդր Կվիտաշվիլիի հանդիպումը տարածաշրջանային գերատեսչությունների ներկայացուցիչների հետ:

Ինչպես հանդիպումից հետո հայտարարել է Կվիտաշվիլին, A/H1N1 վիրուսով հիվանդանալու երկրորդ ալիքն ավելի թույլ կլինի, քան առաջինը, որի բարձրակետը ձմռան սկզբին էր:

«A/H1N1 վիրուսով հիվանդանալու երկրորդ ալիքն ավելի թույլ կլինի, քանի որ բնակչության մեծ մասն արդեն հիվանդացել է այդ վիրուսով, իսկ դրա բարձրակետը կլինի մարտին, երբ առավել մեծ թվով հիվանդություններ են գրանցվում»,-հայտարարել է նախարարը:

Ներկայում Վրաստանում գրանցվել է A/H1N1 վիրուսով հիվանդանալու 1272 դեպք, դրանցից 28-ը՝ մահացու ելքով:

# Իշխանական ճաշ՝ ի պատիվ Հայաստանի ու հայ ժողովրդի

Լոնդոնից «**Ազգին**» հասած ոչ պաշտոնական տեղեկություններով, առաջիկա ուրբաթ օրը, փետրվարի 12-ին, Մեծ Բրիտանիայի գահաժառանգ իշխան Չարլզը ճաշկերույթ կտա ի պատիվ Հայաստանի Հանրապետության եւ հայության՝ հանձինս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսի: Ըստ մեր ստացած տեղեկությունների, ճաշկերույթին հայկական կողմից կմասնակցեն նաեւ Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան Վահե Գաբրիելյանը, հայտնի գործարար եւ բարերար Վաչե Մանուկյանը, ՀՀ նախկին վարչապետ ու բարերար Արմեն Սարգսյանը եւ ուրիշներ:

*(Այս եւ այլ տվյալների մասին մեկնաբանությունը տեսնել 2-րդ էջում):*

# «Տոյոտան» իր մեքենաները հետ է բերում շուկայից



**Մեքենա արտադրող «Տոյոտա» ընկերությունը հայտարարել է, որ Հյուսիսային Ամերիկայի եւ Ճապոնիայի ավտոշուկայից հետ է բերում իր «Պրիուս» մակնիշի հիբրիդային ավտոմեքենաները: Այս մասին արդեն կա պայմանավորվածություն համապատասխան մարմինների հետ: Պատճառը սպառողների դժգոհությունն է մեքենաների արգելակման համակարգից: Ընկերության գլխավոր տնօրենը երեկ ներողություն խնդրեց սպառողներից ու դիստրիբյուտորներից: Նախատեսվում է, որ միայն Հյուսիսային Ամերիկայի շուկայից հետ կբերվեն 103 հազար ավտոմեքենաներ, իսկ Ճապոնիայից՝ 176 հազարը: Ընկերությունը հայտարարել է, որ «Պրիուսները» կենթարկվեն մանրակրկիտ վերանորոգման, որը կարժենա 2 մլրդ դոլար:**

**Ռուսական աղբյուրների համաձայն՝ հնարավոր է, որ ռուսական շուկայից նույնպես 160 հազար «Տոյոտա-Պրիուս» մակնիշի մեքենաներ հետ տարվեն արտադրող ընկերություն:**

# «Արձանագրությունների ստորագրումը չի խոչընդոտի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը»

«Եթե հայ-թուրքական Արձանագրությունների վավերացումը անհաջողության մատնվի, դա կարող է լրջորեն ազդել ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վրա»: Սա ամերիկացի քաղաքագետ, 2001-2004թթ. հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի նախագահ Դեւիդ Ֆիլիպսի տեսակետն է: Նրա դիտարկմամբ՝ ամերիկյան պաշտոնյաներն իրենց թուրք գործընկերներին հայ-թուրքական սահմանի բացման անհրաժեշտությունն էին մատնացույց անում դեռեւս Բուշ կրտսերի վարչակազմի օրոք: «Օբամայի վարչակազմը ճնշում է գործադրում թուրքերի վրա ամենաբարձր մակարդակով: Եթե Արձանագրությունները վավերացվեն Անկարայում, այդ ճնշումը կնվազի: ԱՄՆ պետքարտուղարի առաջին տեղակալ Ջեյմս Սթայնբերգի այցը Երեւան հստակ ցուցիչ է, որ Օբամայի վարչակազմը հասկանում է հարցի կարեւորությունը եւ կարիք ունի բարձրացնելու իր ներգրավվածության մակարդակը: Մոտ ապագայում այդ լծակի կիրառումը պետք է ակտիվացվի», նշել է քաղաքագետը՝ հավելելով, որ Երեւանը սխալ թույլ կտա, եթե չեղյալ հայտարարի Արձանագրությունները:

Հստակ մեսիջ ուղարկելով Երեւանին՝ քաղաքագետը կարծիք է հայտնել, որ Հայաստանի իշխանությունները պետք է հնարավորն անեն՝ հաստատելու իրենց վճռականությունը գործընթացի նկատմամբ: Ֆիլիպսն առաջարկում է Սերժ Սարգսյանին Արձանագրությունները ԱԺ ներկայացնել առանց քվեարկության դնելու անհրաժեշտության: «Եթե դրանից հետո էլ թուրքական կողմը որեւէ քայլ չձեռնարկի, Հայաստանը կարող է ասել, որ ինքը կատարել է իր պարտականություններն ու պատրաստ է առաջ ընթանալ: Այդ դեպքում դիվանագիտական ձախողման պատասխանատվությունը կընկնի Անկարայի վրա»:

Ըստ նրա, Արձանագրությունների վավերացման վերջնաժամկետը ապրիլի 24-ն է: «Թուրքիայում չարաչար սխալվում էին, եթե կարծում էին, որ Արձանագրությունների ստորագրմամբ կխոչընդոտվի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը», ասել է նա:

**Հ. Հ.**

# Ինչ-որ նոր իրավիճակ է մոտենում

Ըստ **«Ազգի»** լոնդոնահայ համայնքի որոշ դեմքերից ստացած մեր տեղեկությունների՝ Մեծ Բրիտանիայի թագաժառանգ Չարլզը ճաշի է հրավիրել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին, որը տեղի կունենա փետրվարի 12-ին: «Ի պատիվ Հայաստանի» վերտառությամբ տրվող այս ճաշին ենթադրվում է, որ ներկա կլինեն տեղի հայկական համայնքի ներկայացուցիչներ, օրինակ, հայտնի բարերար եւ գործարար Վաչե Մանուկյանը: Հավանաբար ներկա կլինեն Հայաստանի նախկին վարչապետ Արմեն Սարգսյանը եւ, բնականաբար, Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպան Վահե Գաբրիելյանը:

Հետաքրքրական է, որ մեր դիվանագիտության վերջին շրջանի պատմության մեջ առանձնապես շատ հայտնի չեն այդպիսի ոչ պաշտոնական ճաշեր, կամ էլ եղել են՝ մամուլին հայտնի չեն դարձել: Մի կողմից բարձրաձայնված իրականությունն այն է, որ թագավորական ընտանիքը Անգլիայում գործնական քաղաքականությանն ու գործադիրի առօրյա գործունեությանը շատ չի խառնվում, բայց մյուս կողմից՝ երկրի ընդհանուր քաղաքականության կռողն ու կրողը հենց նա է, այնպես որ անպաշտոն ճաշ, թե ոչ, այստեղ հավանաբար չեն կարող չքննարկվել մեր տարածաշրջանային անվտանգության, հայ-թուրքական հարաբերություններին առնչվող խնդիրներ: Վերջին շրջանում մեր տարածաշրջանում ակտիվություն դրսեւորող մեծ խաղացողների թվում Մեծ Բրիտանիայի շորշոփն արտաքնապես նկատելի չէ, բայց դա չի նշանակում, թե նավթային շահեր եւ «Բրիտիշ Պետրոլիում» ունեցող, ՆԱԲՈՒԿԿՕ-ով հետաքրքրված այս երկիրն իր ազդեցության գործակալներով ներկա եւ մասնակից չէ գործընթացներին:

Թե ինչ պայմանավորվածությունների արդյունքում է այդ բրիտանական ճաշի հրավերն առ Հայաստանի նախագահ, չգիտենք, բայց զուգահեռ հարթության վրա եթե դնենք այն տեղեկությունը, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման շուտով խորհրդակցության է հրավիրելու ԱՄՆ-ի գլխավոր հայկական կազմակերպությունների ղեկավարներին, այդ թվում՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության, Ամերիկայի հայկական համագումարի, «Վարդանանց ասպետների» ղեկավարներին, ինչպես նաեւ Հայ դատի կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչներին՝ խորհրդակցական հանդիպման, սա խոսում է զուգահեռ կարգավորվող գործընթացների ինչ-որ համակարգված մոտեցման մասին: Իսկ հայ-ռուսական ակտիվ շփումները, ամերիկյան եւ ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների վերջին՝ հաճախակի այցերը Հայաստան, հայ-իրանական շփումները ինչ-որ նոր իրավիճակի մոտենալն են կարծես նախանշում: Զգացվում է, որ մեծ տերությունները հատկապես հայկական շրջանակների հետ աշխատանքը հավասարակշռելու եզրեր են փնտրում: Եթե ավելացնենք Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի՝ իրար հերթագայող արտերկրյա այցերն էլ նույն միավոր ժամանակամիջոցում (ասենք՝ մի տասը օրվա մեջ) նախ՝ Թուրքիա, հետո՝ Աթենք եւ ապա Փարիզ, զգացվում է, որ Հայաստանին առնչվող մի քանի հարց կարիք ունեն անհետաձգելի համաձայնեցման: Այդ բոլորին էլ գումարվում են պատերազմի վերսկսման մասին շրջանառվող խոսակցությունները փորձագիտական եւ մամուլի մակարդակով, ինչը ստույգ նշան է, որ մեր տարածաշրջանում ինչ-որ բան է փորձարկվում: Եթե հաշվի առնենք, որ հունվարի 25-ին Սոչիի հանդիպումից հետո համանախագահները երկու շաբաթ են տվել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին, որպեսզի վերջիններս առաջարկներ ներկայացնեն ղարաբաղյան կարգավորման դեռեւս չհամաձայնեցված դրույթների վերաբերյալ, ու եթե մի քիչ էլ ռետինի նման ձգենք այդ ժամկետը, դա կարող է ընկնել մեր՝ վերը նշած հանդիպումների ժամկետների վրա, ինչ-որ եզրահանգումների հիմք դառնալով:

Այս ֆոնին մտածելու նյութ է հայկական մամուլում ամերիկյան սկզբնաղբյուրներ ունեցող թափառող հարցադրումը՝ հնարավո՞ր է արդյոք պատերազմի վերսկսումը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Որոշ վերլուծաբաններ արդեն խոսում են այն մասին, որ գարնան սկզբին, ղարաբաղյան բանակցությունների հերթական հանգրվանից հետո, այդպիսի բան կարող է տեղի ունենալ, երբ կողմերի ակնկալիքները չարդարանան: Պարզ է, որ երկնքից ընկած ինչ-որ առաջարկներ կողմերը չեն մտածելու, պարզ է, որ բանակցությունները շատ շուտով որեւէ նոր արդյունք չեն գրանցելու հենց այն պատճառով, որ կողմերի ըմբռնումները չհամաձայնեցված սկզբունքների վերաբերյալ ոչ միայն մոտ չեն, այլեւ պարզապես տարամետ են: Եվ հասկանալի է, որ հայերս պետք ամեն րոպե պատրաստ լինենք պատերազմի՝ ինչպես երկրի պաշտպանության նախարարն է ասում մշտապես, եւ երկրի նախագահը ձեւակերպեց վերջերս, բայց վերցնել ադրբեջանական խուճապային բացականչությունները պատերազմի մասին, անգամ ժամկետների նշումը վերահասցեագրել մեր հասարակությանը, առնվազն մակերեսային մոտեցման դրսեւորում է:

Պատերազմի վերսկսման հավանականությունը, որը բոլորովին էլ ոչ պատահական է ներմուծվում արտերկրի եւ տեղական լրատվամիջոցներ՝ այս կամ այն գեոպոլիտիկ կենտրոնից, իր մեջ կարող է ունենալ ոչ միայն հասարակական կարծիքի վրա ազդելու խնդիր կամ խուճապային տրամադրության ձեւավորում կոնկրետ պատերազմի վերսկսման սպառնալիքի ներքո, ինչը մերոնք առանց մտածելու վերցնում եւ ծամում են: Գուցե այս կենտրոնները մեզ վախեցնում են պատերազմով՝ իրենց պատկերացրած զիջումները պարտադրելու՞ համար, ասենք, ղարաբաղյան հարցում կամ հայ-թուրքական ուղղությամբ, չգիտեմ, բայց որ այդ կենտրոնները գործում են ոչ թե «փորձագիտական ազնիվ խուքի», այլ իրենց երկրի գեոպոլիտիկ շահերի պատվերի ծիրում, սա հանրահայտ ճշմարտություն է: Ամերիկյան ինչ-որ կենտրոն չի բացառում, որ Ղարաբաղի հետ կապված՝ իրավիճակը տարածաշրջանում կարող է դուրս գալ վերահսկողությունից, կամ ամերիկյան հետախուզության պետը ռազմական գործողությունները չի բացառում. այս մտքերի պարզ վերարտադրությունը խուճապ եւ վախ կարող են առաջացնել վերլուծական միտք կիրառել չկամեցողների մեջ: Պաշտպանության նախկին փոխնախարար Արթուր Աղաբեկյանն, օրինակ, որպես էքսպերտ եւ աղբյուրներին տիրապետող մարդ, պատերազմը վերսկսելու հիմքեր չի տեսել, քանի որ Ադրբեջանը, նրա կարծիքով, համոզված չէ պատերազմը վերսկսելու դեպքում միանշանակ հաղթանակում: Նույնպիսի տեսակետ են հայտնում ուրիշ փորձագետներ եւս:

Երեկ պատերազմի վերսկսման հնարավորությունը մոտակա չեն համարել նաեւ ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչները խորհրդարանական շաբաթն ամփոփող ճեպազրույցներում, թեեւ տեսականորեն դա ընդհանրապես հնարավոր չէ բացառել:

Ընդհանրապես՝ իրար հերթագայող տեղեկատվական հոսքը Հայաստանում հատկապես խոր փորձագիտական եւ համակարգված վերլուծությունների կարիքն ունի, ու դրանք հասարակության ականջ հալել-լցնելու գործելակերպն այսօր պարտադիր է, մինչդեռ այդպիսի վերլուծությունների փորձը միայն լրատվամիջոցների մակարդակով եւ ջանքերով տեղեկատվական ավերներ կարող է գործել՝ նաեւ լուրջ ու ոչ միայն փորձագիտական հետեւանքներով:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹԷՔԷՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

# Բացվեց կերպարվեստի մրցութային ցուցահանդեսը

**Փետրվարի 5-ին Թեքեյան կենտրոնում բացվեց «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխության գեղանկար, քանդակ անվանակարգերում ներկայացված աշխատանքների ցուցադրությունը:**

**«Վահան Թեքեյան» մրցանակաբաշխությունը, որն արդեն հաճելի ավանդույթ է դարձել, կազմակերպում է Հայաստանի Թեքեյան մշակութային միությունը: Մրցանակաբաշխությունն ամփոփում է միայն 2008 թվականի ընթացքում ստեղծված աշխատանքները:**



**«Ընդգրկված են մշակույթի 9 բնագավառներ՝ գրականություն, երաժշտություն, թատրոն, հեռուստառադիոլրագրություն, գեղանկար, քանդակ, սոցիալ-քաղաքական երգիծանք, ստեղծագործություններ մանուկների համար: Մասնակցում են ինչպես Հայաստանի, այնպես էլ Լեռնային, Ղարաբաղի, Ջավախքի, սփյուռքի ստեղծագործողներ: Շատ ենք ուզում, որ հիմնականում երիտասարդներ մասնակցեն, որովհետեւ մենք միշտ փնտրում եւ ուզում ենք բացահայտել երիտասարդների, ովքեր մնացել են իրենց տաղանդի մեջ պարփակված», ասաց Թեքեյան մշակութային միության գրասենյակի պատասխանատու Գայանե Մուրադյանը:**

**Ցուցադրությունը ոչ միայն հնարավորություն է տալիս արվեստասեր հասարակությանը ծանոթանալու արվեստի հետաքրքրական եւ թարմ աշխատանքներին, այլեւ օգնում է ժյուրիի անդամներին ավելի հեշտ կողմնորոշվել ու անաչառ լինել: Այսպիսի ցուցադրությունների ժամանակ ստեղծվում է առանձնակի մթնոլորտ, որտեղ քննարկվում են աշխատանքները, հնչում են տարբեր արվեստագետների կարծիքներ, որոնք ժյուրին եւս հաշվի է առնում: Մրցույթը չունի ոճային սահմանափակումներ, չկա պարտադրված թեմատիկա: Գեղանկար անվանակարգում մասնակցում են 23 հոգի, քանդակ անվանակարգում՝ 8: Ցուցադրվող բրոնզե, մարմարե քանդակները, յուղանկարները, ջրաներկով ու պաստելով աշխատանքները յուրահատուկ թարմություն են մերօրյա ցուցադրությունների մթնոլորտում:**

**«Հիանալի աշխատանքներ են ներկայացված, եւ ժյուրիի աշխատանքը բավականին դժվար է լինելու: Շատ ուրախ եմ, որ այս գեղեցիկ ավանդույթը շարունակվում է», նկատեց ժյուրիի նախագահ, արվեստաբան Հրավարդ Հակոբյանը:**

**«Վահան Թեքեյան» մրցանակաբաշխությունը կազմակերպվում է 1991 թվականից, նրա մրցանակակիրներից են եղել Հայաստանի եւ սփյուռքի նշանավոր բազմաթիվ արվեստագետներ ու գրողներ, կոլեկտիվներ:**

**«Ստեղծագործողները մեր սոցիալական խավի ամենաանպաշտպան շերտն են կազմում, այս մրցանակաբաշխության նպատակն է նաեւ խթանել ստեղծագործողների աշխատանքը, ասել, որ ամեն ինչ դեռ կորած չէ: Ամեն մի անվանակարգ ունենալու է մեկ մրցանակակիր, մրցանակը լինելու է 1000 դոլարին համարժեք դրամ», նշեց Գայանե Մուրադյանը:**

**Անվանակարգերի հովանավորը Ամերիկայի ու Կանադայի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչությունն է, ԹՄՄ շրջանակի անդամները: Քանի որ սա միջազգային մրցանակաբաշխություն է, ապա շատ է լինում, որ հաղթող են ճանաչվում սփյուռքահայ արվեստագետներ, օրինակ, անցյալ տարի քանդակի գծով մրցանակը ստացավ ԱՄՆ-ից Էմիլ Գազազը:**

**«Հաճախ հայտնի արվեստագետների կողքին հաղթող են ճանաչվում երիտասարդ ստեղծագործողները: Անցյալ տարի գեղարվեստական լուսանկարչություն անվանակարգում մրցանակ ստացավ 22-ամյա ուսանողը», ասաց Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը:**

**Բոլոր 9 անվանակարգերի հաղթողների անունները հայտնի կլինեն փետրվարի 9-ին, ժամը 17-ին՝ Թեքեյան կենտրոնում:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Եվրոմիության պատվիրակությանը

**Եվրոպական կառույցների հետ Հայաստանի համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը փետրվարի 5-ին ընդունել է Եվրոմիության արտաքին հարաբերությունների գլխավոր տնօրենության Հայաստանի բաժնի քաղաքական եւ տնտեսական հարցերով պատասխանատու Այլի Ռիբուլսի գլխավորած պատվիրակությանը եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դը Լյուցենբերգերին:**

**Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Եվրոմիություն համագործակցության հարցեր:**

**Արթուր Բաղդասարյանը նշել է, որ Եվրոպական հարեւանության քաղաքականության «Հայաստան-Եվրոմիություն» գործողությունների ծրագրն արդյունավետ է իրականացվում, տարբեր ոլորտներում իրականացվում են խորքային բարեփոխումներ:**

**Այլի Ռիբուլսը ներկայացրել է Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակում նախատեսվող նոր ինստիտուցիոնալ բարեփոխումների պլանը, որն ասոցացման, ազատ առեւտրի, անվտանգության, արդարության եւ ազատության համաձայնագրերի կնքմանն ընդառաջ Հայաստանի պետական մարմինների վարչական կարողությունների ուժեղացում է ենթադրում:**

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

# Փոխըմբռնման հուշագիր են ստորագրել

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) հայաստանյան առաքելության տնօրեն Ջաթինդեր Չիմանը փետրվարի 5-ին փոխըմբռնման հուշագիր են ստորագրել: Ստորագրման արարողությանը ներկա են եղել ԱԺ աշխատակազմի ղեկավարը, պատգամավորներ, Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանը, հյուրեր:

Ստորագրված հուշագրով նախատեսվում է իրականացնել օրենսդրական բարեփոխումներ, զարգացնել Ազգային ժողովի տեղեկատվական, փորձագիտական, վերլուծական եւ հետազոտական հնարավորությունները, կատարելագործել խորհրդարանի վերահսկողական գործառույթը, պատգամավորներին եւ աշխատակազմին միջազգային փորձն ուսումնասիրելու հնարավորություն ընձեռել:

Ն. Ս.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշուապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 2/5/2010 10:18 PM Page 1



ԱԶԳ

## Անցուդարձ

# ԱՊՀ հետագա անելիքները քննարկվել են Շուվալով-Գեւորգյան հանդիպման ընթացքում

Փետրվարի 4-ին աշխատանքային այցով Հայաստան ժամանած Ռուսաստանի փոխվարչապետ, ԱՊՀ գործերով ազգային համակարգող **Իգոր Շուվալովը** երեկ հանդիպել է իր հայաստանցի գործընկեր **Արմեն Գեւորգյանի** հետ։ Շուվալովը Գեւորգյանին հրավիրել է Մոսկվա՝ մասնակցելու մարտի 5-ին կայանալիք ԱՊՀ գործարար ոլորտի առաջատարների համաժողովին։

Ռուսաստանցի պաշտոնյայի այցի հիմնական նպատակը 2010-ին ԱՊՀ-ում Ռուսաստանի նախագահության մեկնարկի կապակցությամբ առաջիկա անելիքների քննարկումն է։ Շուվալովը Երեւանում ներկայացրել է ԱՊՀ շրջանակներում տնտեսական համագործակցության ուղղությամբ իրականացվող եւ նախատեսված ծրագրերը։ Գեւորգյանն ու Շուվալովը մասնավորապես անդրադարձել են Հայրենական պատերազմի 65-ամյակին նվիրված միջոցառումների անցկացմանը, ինչպես նաեւ էներգետիկայի, տրանսպորտի ոլորտներին վերաբերող հարցերին։

Զրուցակիցները քննարկել են նաեւ հայ-ռուսական հարաբերությունների հարցեր, մասնավորապես ընդգծվել է, որ հատկապես տնտեսական երկկողմ հարաբերությունները խորացման կարիք ունեն։

ԱՊՀ նախագահող՝ Ռուսաստանի փոխվարչապետը ընդգծել է, որ անհրաժեշտ է արդիականացնել կառույցը, ավելի կատարելագործել։ Շուվալովն ընդգծել է, որ դրա համար պետք է ընդունված որոշումները վերանայել՝ դրանք արդյունավետ եւ աշխատող դարձնելու համար։ Գեւորգյանն իր հերթին նշել է, որ Հայաստանը պատրաստակամ է «բոլոր հարցերը քննարկել եւ փոխշահավետ լուծումներ գտնել»։ ՀՀ փոխվարչապետը նշել է նաեւ, որ Հայրենական պատերազմի 65-ամյակին նվիրված միջոցառումների իրականացումը Հայաստանում արդեն պլանավորված են, դրանք կանցկացվեն հանրապետության ողջ տարածքում։ Գեւորգյանը հատկապես կարեւորել է ԱՊՀ շրջանակներում հումանիտար, ինչպես նաեւ միջտարածքային համագործակցությունը։ Գեւորգյանը նշել է, որ բոլոր այս հարցերն առավել մանրամասն կքննարկվեն իր՝ Մոսկվա կատարելիք այցի ժամանակ։

Հ. Ա.

# Վարչապետը ընդունել է Իգոր Շուվալովին




Ռուսաստանի փոխվարչապետ Իգոր Շուվալովին ընդունել է վարչապետ **Տիգրան Սարգսյանը**։ Վերջինս շեշտել է, որ չնայած առկա համաշխարհային ֆինանսական ճգնաժամին, Հայաստանը կատարել է իր բոլոր պարտականությունները՝ ԱՊՀ շրջանակներում։ Հայաստանի վարչապետը նաեւ նկատել է, որ Շուվալովի այցը Երեւան մեծ նշանակություն ունի ԱՊՀ երկրների միջեւ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ։ Իր հերթին՝ Ռուսաստանի փոխվարչապետը կարեւորել է ԱՊՀ շրջանակներում Ռուսաստան-Հայաստան երկկողմ շփումները։

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ Հայաստանում ատոմային բժշկության, բիոքիմիայի, ֆիզիկայի, մոլեկուլային կենսաբանության զարգացման հարցեր, ինչպես նաեւ հայ-ռուսական նորարարական կենտրոնի ստեղծման նախագիծը։ Տիգրան Սարգսյանը շեշտել է, որ «ձեւավորված երկկողմ ավանդական լավ հարաբերությունները հիմք են տալիս բոլոր նախագծերի իրականացման համար»։

Հ. Ա.

# «Արարատբանկը» թողարկեց բանկային նոր՝ DUAL քարտը

### *Բանկային վճարումների եւ մետրոյում վճարումների համար*

**«Արարատբանկը» երեկ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցած շնորհանդեսի ժամանակ հայտարարեց բանկի երկու նորությունների մասին։ Ինչպես իր ելույթում տեղեկացրեց բանկի վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը, «Արարատբանկը» սկսել է թողարկել Mifare (առանց կոնտակտի) տեխնոլոգիայով նոր DUAL քարտը։ Այն երկակի կիրառում ունի՝ իբրեւ «ԱրՔա» համակարգի վճարային քարտ եւ Երեւանի մետրոպոլիտենում ուղեւորությունների համար վճարումներ կատարելու միջոց։ Ըստ Աշոտ Օսիպյանի, այս քարտի մշակումը սկսվել է 1 տարի առաջ եւ առաջիկայում կարող է կիրառվել նաեւ վերգետնյա տրանսպորտի վճարումների համար։ Հաճախորդներին CLASSIC-M կոչվող բանկային քարտը կտրամադրվի արդեն իսկ ակտիվացված, որի մեջ ներառված կլինի նաեւ մետրոյով 6 անվճար երթեւեկելու հնարավորություն։ Քարտը հնարավոր է լիցքավորել մետրոյի կայարաններում եւ «Արարատբանկի» բոլոր մասնաճյուղերում։**

**Մյուս նորությունը, որի մասին հայտնեց «Արարատբանկի» վարչության նախագահը, բանկի վաճառքի մինիկենտրոնների ծրագրի մեկնարկի եւ Մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանում առաջին մինիկենտրոնի բացման մասին է։ Այս կենտրոններում հաճախորդները կարող են օգտվել բանկի մատուցած բոլոր ծառայություններից՝ առանց բանկի գլխավոր գրասենյակ կամ խոշոր մասնաճյուղեր այցելելու։**

**DUAL քարտերի թողարկման մասին խոսելով, ԿԲ խորհրդի անդամ Վախթանգ Աբրահամյանն այն կարծիքը հայտնեց, որ «Արարատբանկը» հերթական անգամ դրսեւորում է ազգային միտված քաղաքականություն։ Նա ողջունելի համարեց այս նախագիծը, քանի որ նախատեսված է հասարակության լայն խավերին նոր տեխնոլոգիաներով ծառայություններ մատուցելու համար։**

**«ԱրՔա» ընկերության տնօրեն Շահեն Հովհաննիսյանն ընդգծեց, որ Հայաստանում առաջին անգամ թողարկվել են քարտեր, որոնք մագնիսական են, բայց ունեն նաեւ ռադիոընդունիչ։ Նա կարեւորեց, որ այս քարտը օգտագործելով՝ ե՛ւ որպես վճարային, ե՛ւ որպես տրանսպորտից օգտվելու միջոց, հնարավորություն է տալիս իրականացնելու մեծաքանակ փոքրածավալ վճարումներ։**

**Երեւանի մետրոպոլիտենի տնօրեն Փայլակ Յալոյանը մետրոյի աշխատակիցների անունից շնորհակալություն հայտնեց «Արարատբանկին» այս քարտի թողարկման համար, նշելով, որ քաղաքակիրթ աշխարհն արդեն անցել է նման տեխնոլոգիաների կիրառմանը։ Նա հայտնեց, որ մետրոյում անցյալ տարվա ընթացքում ներդրվեցին նոր տեխնոլոգիաներ, ինչի արդյունքում, հակառակ աշխարհում արձանագրված անկման միտումներին, Երեւանի մետրոյում ցուցանիշների նվազում չարձանագրվեց։**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԻՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Պատերազմ, թե՞ խաղաղություն

*1-ին էջից*

Քաղաքագետ **Երվանդ Բոզոյանը** շտապեց համաձայնել, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերջին շրջանում պատերազմի վերսկսման հավանականությունն էականորեն մեծացել է։ Եթե երկու-երեք տարի առաջ, դատելով երկրի տնտեսական աճից, արտաքին քաղաքականության կուրսից եւ մի շարք այլ գործոններից, Բոզոյանը գրեթե բացառում էր պատերազմի վերսկսման հավանականությունը, ապա այժմ իր տեսակետներում զգալի փոփոխություններ են տեղի ունեցել։ «Պատերազմները, առհասարակ, սկսվում են այն ժամանակ, երբ կողմերից մեկն իրեն ավելի ուժեղ է զգում։ Իսկ այսօրվա «սառը պատերազմի» պայմաններում Ադրբեջանն իրեն այդպիսին, կարծես, զգում է», նշել է քաղաքագետը, ավելացնելով, որ եթե հայկական կողմը «սառը պատերազմում» թուլացնի իր դիրքերը, դա կարող է հանգեցնել իրական պատերազմի։

Ըստ Բոզոյանի, եթե ադրբեջանցիները հասկանան, որ Հայաստանը տանուլ է տալիս արտաքին քաղաքականության ասպարեզում տեղի տալով Թուրքիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, իսկ վերջում արդեն նրանց բոլորի ճնշումներին, անկումներ է արձանագրում տնտեսության եւ այլ ոլորտներում, այսինքն թուլացնում է դիրքերը բոլոր ուղղություններով, ապա պատերազմի հավանականությունն, անկասկած, մեծանում է։

Ղարաբաղյան հակամարտության ճանապարհին պատերազմի վերսկսման հավանականությունը չի բացառում նաեւ քաղաքագետ **Ստեփան Գրիգորյանը**, պարզաբանմամբ, որ կողմերի դիրքորոշումները սկզբունքային հարցերում խիստ տարբեր են։ Քաղաքագետի կարծիքով, Ադրբեջանը, Թուրքիան եւ մի շարք այլ երկրներ անընդհատ փորձում են արհեստականորեն արագացնել իրադարձությունների զարգացումը, ինչն էլ, շատ հավանական է, որ կմեծացնի ղարաբաղյան պատերազմի վերսկսման հավանականությունը։

Միեւնույն ժամանակ, Գրիգորյանի կարծիքով, այսօր նման մտավախություն չկա, քանի որ ԵԱՀԿ Մինսկի խմբում գործընթացը շարունակվում է, եւ բացի այդ, միջազգային հանրությունը երբեք չի սատարի ուժային լուծմանը. իսկ Հայաստանն ու Ադրբեջանը հաշվի են նստում միջազգային կարծիքի հետ։

ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու **Կիրո Մանոյանը** գտնում է, որ որեւէ մեկը չի կարող բացառել, թե ղարաբաղյան պատերազմը երբեւէ կարող է վերսկսվել, սակայն չբացառելը դեռ չի նշանակում, որ պատերազմի վերսկսման հավանականությունը մեծ է։

Ըստ նրա, պատերազմի վերսկսման հավանականությունը կարող է մեծանալ միայն այն դեպքում, եթե հակամարտող կողմերից մեկը, այս դեպքում Ադրբեջանը, զգա, որ ինքը 51 տոկոս հավանականություն ունի հաղթելու պատերազմում, ինչն այսօրվա դրությամբ այդպես չէ։ Կիրո Մանոյանի խոսքերով, Ադրբեջանը պատերազմ կսկսի միայն այն ժամանակ, երբ վստահ կլինի իր հաղթանակին կամ եթե զգա, որ Թուրքիան լքել է իրեն եւ հարաբերություններ է հաստատում Հայաստանի հետ։

Իշխանություն-ընդդիմություն հարթություններում մեկնաբանությունները եւս հետաքրքրական են՝ ելնելով պահի հարմարավետությունից ու նշանակությունից։ Մասնավորապես, ՀՀԿ մամուլի քարտուղար **Էդուարդ Շարմազանովի** կարծիքով, քանի դեռ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերջնական խաղաղության պայմանագիր չի կնքվել, ղարաբաղյան պատերազմի վերսկսումը բացառել տեսականորեն հնարավոր չէ։

Միեւնույն ժամանակ, Շարմազանովի կարծիքով, քանի դեռ բանակցությունները շարունակվում են, եւ մանավանդ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների Սոչիում կայացած հանդիպումից հետո դրանցում դրական դինամիկա է նկատվում, պատերազմի վերսկսման հավանականությունը գործնականում այնքան էլ մեծ չէ։

Հայ ազգային կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնախմբի անդամ **Վլադիմիր Կարապետյանը** գտնում է, որ Հայաստանի վրա դիվանագիտական ճնշումները աճել են, իսկ Ադրբեջանն ավելի ամուր դիրքերից է խոսում։ Նրա խոսքերով, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, երբ Ադրբեջանը բանակցային սեղանին ստիպված էր դիմագրավել հայկական երկու պետություններին, իսկ արդեն Քոչարյանի իշխանության տարիներին նստած էր միայն Հայաստանը, այսօր երկու թուրքական պետությունները են դուրս եկել Հայաստանի դեմ, ինչը փայլուն դիվանագիտական առավելություններ է ստեղծում Ադրբեջանի համար։ Այնուամենայնիվ, Կարապետյանը ներկա դրությամբ ռազմական գործողությունները հավանական չի համարում։

ԱՄՆ Ազգային հետախուզության ղեկավարի հայտարարությունը ղարաբաղյան հակամարտության հնարավոր վերսկսման վերաբերյալ, ըստ Ազգային եւ ռազմավարական հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն **Ռիչարդ Կիրակոսյանի**, նախազգուշացում է Ադրբեջանի համար։ «Հայտարարությունը նախազգուշացնում է, որ պատերազմը կլինի Ադրբեջանի կողմից։ Այդ տարածաշրջանում միայն մեկ երկիր է արձագանքել հայ-թուրքական դիվանագիտությանը՝ Ադրբեջանը», պարզաբանում է Կիրակոսյանը, ավելացնելով, որ ԱՄՆ-ում հասկանում են, որ Ադրբեջանը սխալ հետեւություններ է կատարել 2008 թվականի հարավկովկասյան համակարտությունից։

Կիրակոսյանի կարծիքով, Բլերի ուղերձի մեկ այլ կարեւոր ազդակ է Թուրքիան չմատնանշելը, ինչը վկայում է ԱՄՆ-ի կողմից նրա նկատմամբ հետաքրքրության նվազման մասին։

Հասկանալի է, որ պետական ու ազգային մակարդակներում պատերազմի հավանականությունը եւս չի կարելի բացառել, սակայն երբ այդ մասին բարձրաձայնում են ԱՄՆ բարձր ատյաններից, այն էլ Կոնգրեսի առաջ հայտարարության տեսքով, թերեւս հարկ է զգուշավոր մոտենալ այդ գնահատականներին ու առավել եւս իրավիճակին, որից էլ բխում է ԱՄՆ նման տեսակետի հնչեցումը։

Միաժամանակ, լավ կլիներ փորձել պարզել ու հանրամատչելի դարձնել, թե ինչից ելնելով է նման հայտարարություն արել ԱՄՆ ազգային հետախուզության տնօրենը, ինչու հիմա եւ ինչու հենց այն տեսքով, ինչպես արվել է հայտարարությունը։ Այդօրինակ հայտարարությունները չեն արվում պահի ազդեցությամբ ու իրավիճակային թելադրանքով, ուստի առավել հետաքրքրական հարցերը մնացին էլի բաց. ինչու եւ ինչի համար ԱՄՆ-ը այդ մակարդակով պատերազմի հավանականությունը չբացառելու մասին հայտարարություն է անում՝ ձեռի հետ կապելով այն հայ-թուրքական մերձեցման գործընթացին։

AZG NEW PDF.qxd 2/5/2010 10:19 PM Page 1



## Տեսանկյուն

# Արցախի հիմնախնդրի քննարկման փիլիսոփայական կոռեկտության մասին

Առաջին հայացքից հույժ տարակուսելի է թվում բազմաչարչար քաղաքական խնդրի արծարծման նոր՝ փիլիսոփայական կոռեկտության մեկնակետից դիտարկումը: Լավագույն դեպքում դա կարող է գնահատվել նաեւ որպես պարապ մտավարժանք, որ հազիվ թե որեւիցե էական ներազդեցություն ունենա քաղաքական կրքերով ծայրիծայր բռնված այդ խնդրի քննարկումների եւ լուծումների վրա:

Այնուհետեւ՝ քաղաքական կոռեկտություն լսել էինք, կասի կիրթ ընթերցողը, իսկ ի՞նչ ասել է «փիլիսոփայական կոռեկտություն»: Իսկապես, այս բառակապակցության հասկացական իմաստը դեռ հանրանշանակ չէ, սակայն դրանով նշանակվող գործառույթը հստակ է՝ ծառայել որպես ամենայն մի մշակութային տեքստի պատշաճության (առօրեական ողջախոհության, գիտական ճշմարտացիության, բարոյական արդարամտության, քաղաքական կոռեկտության եւ այլն) նախադրյալ եւ սահմանային հիմք: Այսինքն, իր մի մասնավոր դրսեւորման մեջ՝ քաղաքական արծարծումներում համապատասխանության մեջ գտնվել ակադեմիապես նշանակալի որեւէ փիլիսոփայական ուղղության առաջադրած արժույթների եւ հասկացությունների դասդասումներին՝ որպես քաղաքական մտածողության բացահայտորեն ընտրված կամ ներթափանցորեն գործող նախադրյալների: Եթե վերջիններս տարբեր են քաղաքական երկխոսության կողմերի մոտ (որը արդիական փիլիսոփայական պլյուրալիզմի պարագայում հազվագյուտ բան չէ), ապա էապես դժվարանում է քաղաքական փոխըմբռնումը: Եվ դա փիլիսոփայական կոռեկտության գլխավոր պոստուլատն է:

Սակայն քաղաքական անըմբռնողականություն (թերըմբռնում) կարող է ծագել նաեւ միեւնույն՝ դասական փիլիսոփայական ռացիոնալության, հիմքով կատարվող քաղաքական երկխոսություններում, երբ հստակ չեն բացազատվում քաղաքական դատողությունների հիմնարար տրամաբանական մտակառույցները՝ փիլիսոփայական հասկացությունները: Դատենք ինքներդ:

Արցախի հիմնախնդրի միջազգային-իրավական կարգավորումն իրագործվում է հելսինկյան հայտնի երկու սկզբունքներով՝ պետությունների տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման: Ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում կա երկու էքսպերտային գնահատական. այդ սկզբունքները միմյանց հակասում են, եւ որ դրանք միմյանց չեն հակասում: Անցած տարվա ընթացքում այդ միմյանց հակադիր դիրքորոշումները հնչեցին ՀՀ-ի համար հույժ նշանակալի քաղաքական սուբյեկտների՝ Գերմանիայի եւ Ռուսաստանի Դաշնության արտգործնախարարների շուրթերից:

«Ղարաբաղյան հակամարտությունը տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման սկզբունքների հիման վրա կարգավորելու բազմամյա ջանքերը այդքան էլ արդյունավետ չեն,- ասում է Գերմանիայի ԱԳՆ պետական նախարար պրն. Գերնոտ Էրլերը,- քանզի դրանք հակասում են միմյանց, ուստի բանակցային գործընթացին անհրաժեշտ են ավելի պրակտիկ մոտեցումներ, որոնք ուղղված կլինեն կողմերի տարաձայնությունների հաղթահարմանն ու համաձայնության ձեռքբերմանը»:

ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հակադարձում է՝ «Պետությունների տարածքային ամբողջականությունն ու ազգերի ինքնորոշումը միմյանց ոչ միայն չեն հակասում, այլեւ փոխլրացնում են»: Նկատենք, որ երկուսն էլ կիրթ ու բանիմաց, նաեւ հիմնավոր փիլիսոփայական կրթություն ունեցող քաղաքական գործիչներ են, որոնք, սակայն նույն խնդրի մասին հակասական մտքեր- գնահատականներ են արտահայտում:

Ս. Լավրովի տեսակետը դեռ քաղաքական օպտիմիզմի տիրույթում է՝ անհակասական նորմերով հնարավոր է ռացիոնալ կարգավորում իրականացնել, այնինչ Գ.Էրլերի դիրքորոշումն այս հարցում կամա-ակամա քաղաքական իռացիոնալիզմի դուռ է թակում՝ խնդրի ռացիոնալ, լեգալ կարգավորման անհնարինության եւ քաղաքական ուժային կոնյունկտուրային դիմելու դեղատոմսով (եւ այլ «պրակտիկ մոտեցումներ» չեմ կարող ըմբռնել): Սակայն նաեւ Լավրովի ըմբռնումը կիրառելի չէ քննարկվող խնդրի վերաբերյալ, քանզի վերացական է. եթե դրանք միմյանց համազոր եւ փոխլրացնող սկզբունքներ են, ապա... Արցախի հիմնախնդիրը չէր կարող ծագել: Իսկապես, եթե այդ սկզբունքները լիովին համազոր են եւ փոխլրացնող, ապա ինչի՞ն ենք մենք ապավինել մեր ազատագրական պատերազմում եւ այսօրվա դիվանագիտական պայքարում: Զարմանալի չէ, որ ՀՀ արտգործնախարարի հաղթական հնչերանգով հասարակության ծանուցումն այն մասին, որ միջազգային փաստաթղթերում այդ սկզբունքները հիշատակվում են կողք կողքի, նույնպիսի խանդավառությամբ նաեւ Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունն է հաղթանակի շեփոր հնչեցնում այդ նույն հանգամանքի վերաբերյալ: Տրամաբանությունը սա է՝ եթե այդ սկզբունքները պետք է համատեղվեն եւ համազոր կարգավորիչ լինեն Արցախի հիմնախնդրում, ապա ուրեմն ինքնորոշումը իրագործելի է տարածքային ամբողջականության կոնտեքստում:

Շրջանը կարծես թե փակվեց, եւ հայտնվեցինք տրամաբանական փակուղում. խնդիրն անլուծելի է ինչպես հիշյալ սկզբունքների հակասականության, այնպես էլ փոխլրացման ըմբռնումների դեպքում: Ո՞րն է ելքը:

**Ելքը**. ըստ իս, փիլիսոփայական ռեֆլեքսիայի խորացումն է՝ ինչպես ռուսներն են ասում՝ узрение корня! Հիմնախնդրի փիլիսոփայական համարժեքը «հակասությունն»՛ է, հետեւաբար հարկ է պարզաբանել, արդյո՞ք պահպանվում է մեզ համար կենսականորեն նշանակալի այս իրադրությունում այդ հասկացության պատշաճ փիլիսոփայական ըմբռնումը որպես «խորքային ինֆրաստրուկտուրա», թե՞, ինչպես Հեգելն էր քամահրանքով ասում՝ դրանք խոսակցություններ են, որ չեն բարձրանում հասկացության մակարդակի...

«Հակասություն» հասկացության գրեթե 2,5-հազարամյա փիլիսոփայական ուսումնասիրությունների մեջ հենց Հեգելն ունի մեծագույն ծառայություն եւ ավանդ, որ դասական է եւ ի տարբերություն իր համակարգի այլ բաղադրիչների՝ անանց է եւ դիմակայող մոդեռն ու պոստմոդեռն փիլիսոփայությունների պահգնացող ասպատակությունների հանդեպ: Այդ հարցին վերաբերող նրա պահելի ժառանգության գանձանակից մեր քննարկվող թեմայի համար մեծ ծառայություն կարող են մատուցել հետեւյալ թեզերը:

Հակասությունը, ըստ Հեգելի, համընդհանուր առարկայական սփռվածություն ունի եւ կոչված է ապահովելու ինչպես աշխարհի հանգստի, ներդաշնակ կատարելության, այնպես էլ նրա շարժման (ինքնաշարժման) եւ զարգացման հնարավորությունը: Ոգին, աշխարհը երկատված-բեկված է ինքն իրենում. կա էության, հիմունքի եւ երեւույթի, ֆենոմենի աշխարհ, կա աշխարհի վիճակ եւ աշխարհի իրադրություն: Ընդսմին հակասությունն իր արտահայտված տեսքով բնորոշ է հենց լինելիության, զարգացման մեջ գտնվող երեւույթին, ֆենոմենին, իրադրությանը, որը, սակայն, իրեն չքացման է դատապարտում (sich zu Grunde gehen) նրանով, որ իրեն սահմանում է որպես նույնական միմյանց հետ (Гегель Г. «Наука логики:, т.2, ц.58):

Zu Grunde gehen արտահայտությունը գերմաներենում երկիմաստ է. ուղղակի իմաստով «հիմունքին անցնել» է նշանակում, շրջասաբար՝ «գետինը մտնել, չքանալ» (հայերենը եւս ակնհայտորեն պահպանում է նշված երկիմաստությունը): Մի քանի այլ կոնտեքստերում Հեգելը ուղղակի պնդում է, որ էությունը զուրկ է հակասությունից, թեեւ պահպանում է միմյանց փոխպայմանավորող երկհակադրվածությունը: Առարկայի էությունը լուծված հակասությունների արդյունք է, այնինչ իր երեւութական լինելիության մեջ առարկան մշտապես հակասականության մեջ է: Ի դեպ, XX դարում գիտությունների (կենսաբանության, քվանտային մեխանիկայի) զարգացման արդյունքում ձեւավորվեց «կոմպլեմենտարություն» հասկացությունը, որի փիլիսոփայական ստույգ համարժեքը հենց առարկաների էությանը բնորոշ երկհակադրությունների փոխլրացումն է եւ միասնությունը, թեեւ փիլիսոփայական եւ գիտական մտածաձեւերի այդ խորքային ժառանգորդությունը պատշաճորեն չի բացազատվում:

Տարբերակելով հակասության «գոյաբանական տեղակայման» այդ երկու (էսսենցիալիստական եւ ֆենոմենոլոգիական) կերպերը, Հեգելը տրամաբանական հնարավորություն ստեղծեց իր ուսմունքի ինչպես պահպանողական, այնպես էլ հեղափոխական մեկնաբանությունների համար: Մարքսլենինյան մեկնաբանությունը հույժ հեղափոխական թեւին է պատկանում, որի հետեւանքով էլ հակասության մասին Հեգելի ամբողջական ուսմունքի մի նշանակալի մասը (երկհակադրվածության նշանակությունը ամեն մի առարկայի կայուն, կատարյալ ներդաշնակության վերաբերյալ) նրանում թե՛ անտեսված է, թե՛ հանիրավի քարկոծված:

Այժմ, եթե դառնանք մեր խնդրին, ապա ակնհայտ է, որ երբ Ռուսաստանի արտգործնախարարը պնդում է, թե տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման սկզբունքները չեն հակասում միմյանց, այլ փոխպայմանավորում են, նա ճիշտ է ասում, սակայն մի էական վերապահումով. դա ճիշտ է վերոհիշյալ էսսենցիալիստական, առարկայի նորմալ, կայուն ներդաշնակության իդեալի դեպքում: Մյուս կողմից, երբ Գերմանիայի ԱԳ պետնախարարն է պնդում, որ այդ սկզբունքները հակասում են միմյանց, նա եւս ճիշտ է ասում, բայց մի էական վերապահմամբ. խոսքը վերաբերում է իր ներքին կայուն ներդաշնակությունը կորցրած պետությանը, որի արդյունքում առկա է անհամատեղելիություն այդ սկզբունքների միջեւ: Սրանից հետեւում է, որ առաջացած հակասությունը հարկ է լուծել հենց պրակտիկորեն, որը հենվում է մեծ գերմանացու՝ Հեգելի առաջադրած ռացիոնալ եւ լեգալ մտածողության Matrix-ի վրա եւ ոչ թե ռացիոնալության էքսկուրսիվ ուղիներում...

Այնուհետեւ, բոլոր հիմնարար «միջուկային» հակասությունները բաղադրված են համակարգի կայունությունն ապահովող՝ պահպանողական, եւ համակարգը ապակայունացնող դինամիկ կողմից: Էության, հիմունքի մեջ դրանք բալանսավորված են եւ «հանգած», այնինչ առարկայի լինելիության մեջ հենց դինամիկ կողմն է խախտում ներդաշնակ հավասարակշռվածությունը, իսկ պահպանողական կողմը մշտապես ինքնահավասար է: Արդ, ուրեմն, խնդիրը պատշաճում է քննարկել առնվազն հետեւյալ հարցադրումով. ինչքանո՞վ է հիմնավոր Արցախի ժողովրդի ինքնորոշման շարժումը եւ դրա ռեալ առարկայացումների օրինականությունը:

Այժմ, երբ քաղաքական կոնֆլիկտը նաեւ ռազմական լուծում է ստացել, եւ Հայաստանին առաջադրվում է հիշյալ երկու սկզբունքները կողք կողքի, որպես կարգավորման համազոր նորմեր ընդունել, ապա դա.

ա) մեթոդաբանորեն ոչ կոռեկտ է եւ ոչ ադեկվատ քաղաքական իրադրությանը,

բ) օբյեկտիվորեն ադրբեջանամետ մոտեցում է, քանզի պահպանում է տարածքային ամբողջականության նորմը որպես կոնֆլիկտի կարգավորիչ:

Արցախի հիմնախնդրի միակ ադեկվատ դրվածքը ազգային ինքնորոշման գերակայության ընդունումն է, որպես կոնֆլիկտի (հակասության) լուծման միակ կարգավորիչ, այլ լեգալ եղանակ գոյություն չունի: Իհարկե, հարկ է հաշվի առնել, որ քաղաքական կոնֆլիկտի ռացիոնալ-լեգալ կարգավորումը ենթադրում է կոնֆլիկտի կողմերի համապատասխանությունը արեւմտյան բաց, դեմոկրատիկ հասարակությունների իդեալին, որտեղ թե՛ քաղաքացիների կամարտահայտությունը ներծծված է Եվրոպական ռացիոնալությամբ, թե՛ պետության քաղաքական որոշումները սահմանվում են քաղաքացիների կամքով: Եթե չկա ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ապա պետք է նախապատրաստվել անխուսափելիին:

Ահա թե ինչպիսին է քաղաքական դիսկուրսի փիլիսոփայական կոռեկտության իմ ըմբռնումը: Դա, անշուշտ, խնդրի հիմնարար ըմբռնման ոլորտից է, սակայն ակնհայտորեն նաեւ միանգամայն կոնստրուկտիվ է եւ հրատապ-կիրառական, որ առավել հիմնավոր եւ ամրակուռ կարող է դարձնել մեր դիրքերը, հատկապես միջազգային դիվանագիտական առճակատումներում:

Միներվայի բուն, սիրում էր կրկնել Հեգելը, թռչում է միայն աղջամուղջին: Արցախի հիմնախնդրի երեկոյան աղջամուղջը դեռ առջեւում է, սակայն ես լիահույս եմ, որ հանճարեղ մտածողի իմաստնությունը լրացուցիչ հիմնավորումներ եւ փաստարկներ կմատուցի հանրապետության քաղաքական ղեկավարությանը՝ իրիկնամուտից շատ առաջ...

**ՖԵԼԻՔՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
**Փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր**

## ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

### Զավակն ապերա՞խտ

**«Ազգի» հունվարի 26-ի համարում կարդացի Հասմիկ Հարությունյանի «Ինձ փրկեց աղոթքը» վերնագրով հոդվածը: Ճիշտը որ ասեմ, ցավ զգացի ճակատագիրը խեղված Եվայի համար: Հիրավի խղճահարություն, որ պատիվը փրկելու համար հայտնվել է ուղղիչ ճամբարում: Եվ եթե Եվայի ճակատագրի պատմությունը համապատասխանում է իրականությանը, ապա ես նրա արարքը կանացի խիզախ քայլ կհամարեի եւ խորհուրդ կտայի նրա զավակներին՝ Արտյոմին եւ Լիլիթին, որ իրենց մայրը սխալ չի գործել: Նա՝ այդ խիզախ կինը, պատվի վրեժ է ցանկացել լուծել, իսկ դուք՝ զավակնե՛ր, ձեր բռնած դիրքով ավելի եք բզկտում ամուսնուն կորցրած, ծանր տանջանքներով ձեզ մեծացրած մոր հոգու խռովքը: Սակայն փույթ չէ, ամենքի հետ էլ նման վիճակ պատահում է: Ուզում եմ ասել, դուք՝ զավակնե՛ր, անցածը անցյալ համարեք եւ մի լարվեք ձեր մոր դեմ: Չէ՞ որ երկունքով է նա ձեզ բերել, պահել, փայփայել՝ հույս ունենալով, որ ամուսնու մահից հետո ձեզնով պիտի մխիթարվի... Իսկ դուք՝ չխորանալով անմարդկային երեւույթի մեջ, ոխով եք համակվել ձեր մոր դեմ...**

**Լիլիթ, ես քեզ եմ հարցնում՝ ի՞նչ է նշանակում. «Մա՛յր, հեռացի՛ր, որ մեզ չխայտառակես»: Եվայի զավակներ, ձեր մայրը հոգու խռովք է ապրում՝ դարձի եկեք, սիրե՛ք ձեր մորը, չէ՞ որ նա կարող է միայն ձեզ նեցուկ կանգնել: Կյանքի այս ոչ բարվոք ժամանակներում թխսկան դառնալ, թեւի տակ առնել, պահել:**

Բարի ցանկություններով՝ Ռ. Խ.

### Երախտիք

**Հարգելի խմբագիր**

**Ձեր թերթի միջոցով ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել «Զանգակ-97» հրատարակչության գլխավոր տնօրեն Սոկրատ Մկրտչյանին նրա կատարած մշակութանպաստ մեծ քայլի համար: 2009 թ. վերոհիշյալ հրատարակչատանը տպագրվեց մեր հեղինակած «Հայ արվեստի պատմություն» մեծադիր, ստվարածավալ (շուրջ 600 էջ կազմող), շքեղ պատկերազարդված գիրքը: Հաշվի առնելով ֆինանսական առկա վիճակը, պարոն Սոկրատ Մկրտչյանն իր վրա վերցրեց այդ մեծածախս հատորի հրատարակման բեռը՝ ճշմարիտ հայրենասիրություն, որն օրինակ կարող է ծառայել այլ հրատարակչությունների համար:**

**Հայ արվեստագետները, արվեստասեր հանրությունը, ինչպես եւ երկրի ղեկավարությունն ու անձամբ Հայաստանի նախագահը բարձր գնահատեցին կատարված աշխատանքը՝ գիրքն արժանացնելով ՀՀ պետական մրցանակի:**

ՀՀ պետական մրցանակի դափնեկիրներ՝
ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ-
*Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր*
ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ
*Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր*
ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
*Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր*

### Բախտավորություն

«**Ազգի**» ինտերնետային կայքէջի աշխատակիցներ Վալերա Մարկարյանը եւ Զոյա Մելիքյանը բախտավորվել են 4-րդ թոռնիկով՝ **Վալերիկ**:

Մեր ամենաջերմ խնդակցությունները:

***

«**Ազգի**» նախկին աշխատակից, այժմ՝ Tert.am լրատվական կայքէջի խմբագիր Գոհար Գեւորգյանը եւ ամուսինը՝ Արմեն Բադալյանը բախտավորվել են առաջնեկ զավակով՝ **Վաղարշ**:

Մեր ջերմ խնդակցությունները:

AZG NEW PDF.qxd 2/5/2010 10:18 PM Page 1



# ՀԱՊԿ-ը բոլորին «իրենց տեղն է դնում»

Տաջիկստանի «Երեկոյան Դուշանբե» թերթին տված հարցազրույցում ՀԱՊԿ գլխավոր քարտուղար **Նիկոլայ Բորդյուժան** հայտարարել է, որ նախկին սովետական տարածաշրջանում նոր պատերազմ սկսվելու հեռանկար ինքը չի տեսնում. «Առհասարակ միայն քաղաքական եւ դիվանագիտական մեթոդներ են անհրաժեշտ հակամարտությունները լուծելու համար, իսկ դրանք, հավատացեք, բավարար են: Սակայն միակ տարածաշրջանը, որտեղ որոշ հեռանկարներ կան պատերազմի, Աֆղանստանն է», շեշտել է Բորդյուժան: Կոնկրետ նախկին սովետական երկրների հակամարտությունների մասին ՀԱՊԿ գլխավոր քարտուղարն ասել է, թե «կան երկրների առաջնորդներ, որոնք քաջ տեղյակ են հակամարտությունների պատմությանը, իսկ դա բավարար է ճիշտ որոշումներ կայացնելու համար»:



ՆԱՏՕ-ՀԱՊԿ համագործակցության մասին խոսելիս՝ Բորդյուժան նկատել է, որ դրա կարիքը կա հատկապես Աֆղանստանում եւ Իրանի ուղղությամբ: «Աֆղանստանն ու Իրանը միակ երկրներն են եվրասիական տարածաշրջանում, որտեղ կայունության պահպանումը թերի է, եւ մենք հույս ունենք, որ ՆԱՏՕ-ի ղեկավարության փոփոխությունից հետո մեր երկու կազմակերպությունները կկարողանան համագործակցել գոնե այս երկու ուղղություններով», նշել է ՀԱՊԿ քարտուղարը:

Բորդյուժայի այս հայտարարությունները հատկապես կարեւոր են վերջերս ԱՄՆ-ից հնչած որոշ դիտարկումների ֆոնին («**Ազգ**»-ը անդրադարձել եւ ներկա համարում անդրադարձել է այդ դիտարկումներին): Մասնավորապես, հիշեցնենք, ԱՄՆ ազգային հետախուզության տնօրեն **Դենիս Բլերն** էր կարծիք հայտնել, թե հայ-ադրբեջանական պատերազմի վերսկսումը հնարավոր է, իսկ այդ հայտարարությանը նախորդել էին ամերիկացի փորձագետների դիտարկումները, թե «հնարավոր է, որ Երրորդ համաշխարհային պատերազմն սկսվի հենց Կովկասից»: Ինչեւէ, ՀԱՊԿ-ում գերակա դեր ունեցող Ռուսաստանը, որն առավել քան մոտ է եվրասիական տարածաշրջանին, Կովկասին՝ առավել եւս, բացի դրանից, շատ ավելի լավ է տիրապետում կոնկրետ կովկասյան խնդիրների ողջ պատմությանն ու էությանը, բացառում է որեւէ պատերազմ հետխորհրդային տարածքում:

Հ. ԱՓՅԱՆ

ՎԱՇԻՆԳՏՈՆ

# Կոնգրեսը հավանություն տվեց պետական պարտքի ավելացմանը

**Կոնգրեսի ստորին պալատը երեկ հավանություն է տվել այն օրինագծին, ըստ որի ԱՄՆ պետական պարտքը պետք է ավելանա 1,9 տրիլիոն դոլարով, հասնելով ռեկորդային 14,3 տրիլիոնի: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Այսպիսով, ԱՄՆ յուրաքանչյուր քաղաքացի օտարերկրացի ներդնողներին պարտք կլինի մոտավորապես 46 հազար դոլար:**

**Օրինագծի ընդունումը թույլ կտա ԱՄՆ պարտավորությունների գծով խուսափել փլուզումից: Փաստաթուղթն ընդունվել է դժվարությամբ՝ 217 «կողմ» եւ 213 «դեմ» ձայներով: Մի քանի օր առաջ Սենատում եւս օրինագիծն ընդունվել էր մեծ դժվարությամբ, քանի որ հանրապետականները դեմ էին արտահայտվել պետական պարտքի ավելացմանը: Փաստաթուղթը շուտով կներկայացվի նախագահ Բարաք Օբամային: Արդեն հայտնի է, որ նա պատրաստ է ստորագրել այն:**

**ԱՄՆ կառավարությունը ենթադրում է, որ 2010-ին ՆՀԱ-ն կաճի 2,7, 2011-ին՝ 3,8 տոկոսով: Ընդմին առաջիկա երկու տարում բյուջեի պակասորդը կանցնի 3 տրիլիոն դոլարից:**

**Առայժմ երկրի պետական պարտքը կազմում է 12,37 տրիլիոն դոլար կամ ՆՀԱ ծավալի մոտ 88 տոկոսը: ԱՄՆ-ի խոշորագույն արտաքին վարկատուն Չինաստանն է:**

# Ռումինիայում կտեղաբաշխվեն ամերիկյան հակահրթիռային համակարգի տարրեր

**Ռումինիան համաձայնել է, որ իր ցամաքային եւ ծովային տարածքներում տեղաբաշխվեն հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի տարրեր: Դրանց մարտական հերթապահությունը սկսվելու է 2015-ին:**

**ԱՄՆ պետդեպարտամենտում ճեպասուլիսի ժամանակ պետքարտուղարի օգնական Ֆիլիպ Կրոուլին հայտարարել է, որ Ռումինիայում տեղաբաշխվելու են միջին հեռահարության CM-3 կալանիչ-հրթիռներ: Կրոուլի խոսքերով, Ռումինիայի կատարած ընտրությունը հակահրթիռային պաշտպանությունը տարածում է Եվրոպայի հարավի վրա: Բացի դրանից, ԱՄՆ-ը շարունակում է բանակցությունները Լեհաստանի եւ Չեխիայի հետ: Ինտերֆաքս գործակալությունը հիշեցնում է, որ Լեհաստանը 2009-ի հոկտեմբերին համաձայնեց ընդունել ցամաքային բազավորման CM-3 հրթիռային օբյեկտ:**

**Ռումինիայում հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի տարրերը կտեղաբաշխվեն նաեւ Սեւ ծովում: Կրոուլի խոսքերով, շեշտը դրվում է ցամաքային բազավորման վրա, բայց «ծովայինը նույնպես նախատեսվում է»: Դիվանագետը մանրամասնել է, որ «հակահրթիռին անցնելը պայմանավորված է նրանով, որ հնարավոր է այն տեղաբաշխել թե՛ ցամաքում եւ թե՛ ծովում»:**

**«Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության ամերիկյան նոր համակարգն ուղղված է ոչ թե Ռուսաստանի, այլ հնարավոր իրանական վտանգի դեմ», ընդգծել է Կրոուլին, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:**



# Հաշվի չառնելով Ադրբեջանի եւ Թուրքիայի շահը

Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր **Հուղրաս Հասանգուլիեւը** «Դեյ.ազ»-ին տված հարցազրույցում հայտարարել է, որ գերտերությունները ղարաբաղյան հակամարտության մեջ իրենց ունեցած դիրքորոշումով ինչպես եղել են հակաադրբեջանական, այդպես էլ մնում են. «Ընդ որում՝ գերտերությունների դիրքորոշման փոփոխության հեռանկար նույնիսկ չկա, նրանք միշտ էլ անտեսել են Ադրբեջանի շահերը», նշել է Հասանգուլիեւը: Իսկ սա, ըստ ադրբեջանցի պատգամավորի, ղարաբաղյան հակամարտության ամենեւին էլ խաղաղ կարգավորման երջանիկ հեռանկար չի խոստանում:

Հասանգուլիեւը խոսել է նաեւ Հայոց ցեղասպանությունից, ավելի ճիշտ, ԱՄՆ-ի կողմից ցեղասպանության ճանաչումից: Ըստ պատգամավորի, «ճիշտ է, այնքան էլ հավանական չէ, որ Կոնգրեսը կընդունի ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ, քանի որ դա վերջնականապես կփլուզի թուրք-ամերիկյան ռազմավարական հարաբերությունները»: Սակայն եթե ԱՄՆ-ը պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանությունը, ապա դրանից Թուրքիան միայն կշահի. «ԱՄՆ-ի այդ քայլը հնարավորություն կտա Թուրքիային առավել ազատ արտաքին քաղաքականություն վարելու, քանի որ Անկարան այլեւս չի ենթարկվի Վաշինգտոնի շանտաժներին. շանտաժելու բան էլ չի լինի այլեւս», նկատել է ադրբեջանցի պատգամավորը:

Հավելենք նաեւ, որ անցյալ տարի Հայաստան այցելած թուրք լրագրողներ՝ Ֆերհաթ Բորաթավն ու Բեդրի Գյուրսելը նույնպես հայտարարեցին. «Լավ կլիներ, որ Նահանգները ճանաչեր ցեղասպանությունը, որպեսզի տեսնեինք, թե ինչ կլինի հետո»:

Հ. Ա.

# Թուրքիան չեղյալ է համարում մի գաղտնի արձանագրություն

Թուրքիայի վարչապետ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը** հայտարարել է, որ քայլեր է ձեռնարկում չեղյալ համարելու մի գաղտնի զինվորական արձանագրություն, որը թույլատրում է առանց երկրի իշխանությունների համաձայնության միակողմանի ռազմական ինտերվենցիա կատարել երկրի ներքին անվտանգության սպառնալիքների առկայության դեպքում: ԷՄԱՍԻԱ հապավումով ճանաչված «Համագործակցություն հանուն անվտանգության եւ հասարակական կարգուկանոնի» արձանագրությունը կառավարությունը հաստատել էր 1997-ին:

«ԷՄԱՍԻԱ-ն չի կարող գոյություն ունենալ: Դա ընդամենը արձանագրություն է, ո՛չ օրենք, եւ մենք չեղյալ կհամարենք որոշ իրավական փոփոխություններ կատարելով», նշել է նա:

Արձանագրությանը անդրադառնալու առիթ է ծառայել անցյալ տարի լիբերալ թերթերից մեկում հայտնված այն լուրը, թե իբր ռազմական հեղաշրջում է պատրաստվում երկրում:

Հ. Ծ.

# ՉԺՀ-ում «կաթնային սկանդալը» արգելված թեմա է

Չինական Գուանդոն նահանգի իշխանությունները տեղական լրատվամիջոցներին արգելել են որեւէ ոչ պաշտոնական տեղեկություն հրապարակել մելամինով թունավորված կաթի մասին, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Արգելքը վերաբերում է այսպես կոչված «կաթնային սկանդալի» նոր փուլին: Մեծ աղմուկ հանած այդ պատմությունը սկսվեց 2008-ին, երբ մելամին պարունակող կաթնամթերքից թունավորվեց 300 հազար չինացի եւ մահացավ 6 երեխա: Այդ քիմիկատը արտադրանքին ավելացվում էր սպիտակուցի բարձր պարունակության երեւութականություն ստեղծելու համար: Այն ժամանակ թունավոր կաթի արտադրության ու տարածման մեղադրանքով ձերբակալվեց 20 մարդ, 2-ը մահապատժի ենթարկվեցին, մյուսները բանտարկվեցին:

Այս տարվա փետրվարի 2-ին հայտնի դարձավ Չինաստանի 16 շրջաններում իրականացված սննդամթերքների ստուգումների մասին: Հաջորդ օրը ձերբակալվեցին կաթի արտադրությանն առնչվող 4 անձինք: Դա ԶԼՄ-ներին հիմք տվեց եզրակացնելու, որ ՉԺՀ խանութներում կրկին հայտնվել է մելամին պարունակող կաթ:

Լրագրողների միջազգային ֆեդերացիան դատապարտել է թունավոր կաթին վերաբերող տեղեկատվության տարածման սահմանափակումները: Ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Էյդան Ուայթի կարծիքով, տվյալ որոշումը վկայում է, որ ՉԺՀ իշխանությունները հոգում են ավելի շատ գաղտնիության, քան երկրի քաղաքացիների առողջության մասին եւ անկարող են պատշաճ չափով նրանց տեղեկացնել սպառնացող վտանգի մասին:

# Հնդկաստանը Պակիստանին առաջարկեց վերսկսել երկխոսությունը

**Դելիի իշխանությունները Իսլամաբադին առաջարկել են վերսկսել երկխոսությունը, որն ընդհատվել էր 2008-ի վերջերին՝ Մումբայում (Բոմբեյ) կատարված ահաբեկչական գրոհից հետո: Այդ գրոհների գլխավոր կասկածյալները պակիստանյան «Լաշքար ի Թայբա» ահաբեկչական խմբավորման անդամներն էին:**

**Ֆրանսպրեսի տվյալներով, սպասվում է, որ երկխոսության վերսկսմանը կմասնակցեն երկու պետությունների արտգործնախարարները:**

**Հնդկաստանի ղեկավարությունը մտադիր է առաջիկա բանակցություններում բարձրացնել ահաբեկչության հարցը, ինչպես նաեւ Պակիստանի ներկայացուցիչների հետ քննարկել երկկողմ հարաբերություններում «խաղաղության եւ անվտանգության մթնոլորտ ստեղծելու» հնարավորությունը:**

**2008-ի նոյեմբերի 26-ին Հնդկաստանի գործարար կյանքի կենտրոն Մումբայում տեղի էին ունեցել մի շարք ահաբեկչություններ: Հանցագործները հարձակվել էին մի շքեղ հյուրանոցի եւ հրեական կենտրոնի վրա: Այդ գրոհների ընթացքում սպանվել էր 166 մարդ: Դելիում հայտարարել էին, որ հարձակումների կազմակերպիչը պակիստանյան ահաբեկչական խմբավորումներից մեկն է: Դեկտեմբերի 1-ին Դելին պաշտոնական բողոք էր հղել Իսլամաբադին:**

# Հաիթիում ձերբակալված 10 ամերիկացիներին ներկայացվել են մեղադրանքներ

**Հաիթիի եւ Դոմինիկյան Հանրապետության սահմանի մոտ հունվարի 29-ին ձերբակալված 10 ամերիկացիներին («Ազգը» գրել է նրանց մասին) արդեն ներկայացվել են պաշտոնական մեղադրանքներ: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ ԱՄՆ 10 քաղաքացիները (5 կին եւ 5 տղամարդ) մեղադրվում են 33 երեխաների առեւանգման եւ հանցավոր ընկերակցության ստեղծման մեջ:**

**Մեղավոր ճանաչվելու դեպքում ամերիկացի 10 բապտիստներին սպառնում է երկարատեւ բանտարկություն: Հաղորդվում է, որ նրանք բոլորը Այդահո նահանգի բարեգործական կազմակերպություններից մեկի անդամներ են: Ամբաստանյալները պնդում են, որ իրենք 33 երեխաներին տանում էին Դոմինիկյան Հանրապետությունում գտնվող որբանոց, սակայն Հաիթիի իշխանություններն ասում են, որ երեխաների դուրսբերման փաստաթղթերը սխալ են ձեւակերպված: Նաեւ հայտնի է, որ երեխաներից մի քանիսի ծնողները ողջ են, թեեւ հնարավոր է, որ նրանք երեխաներին կամովին տված լինեին որբանոց:**

**Երկրաշարժից ավերված երկրի վարչապետ Ժան-Մաքս Բելռիվը Ֆրանսպրեսի թղթակցի հետ զրուցելիս դժգոհել է, որ մարդիկ 10 ամերիկացիների դատավարությամբ ավելի շատ են հետաքրքրվում, քան օթեւանից զրկված եւ փողոցներում ծվարող 2 մլն հաիթցիներով: Վերջին տվյալներով, հունվարի 12-ի երկրաշարժի զոհերի թիվն արդեն հասել է 212 հազարի:**

AZG NEW PDF.qxd 2/5/2010 10:20 PM Page 1



# Էգոյանի համար գլխավորը բուռն կրքով աշխատելն է

«Կարեւորն ու հետաքրքրականն այն է, թե ի՞նչն է ինձ հուզում, ինչի՞ն եմ պատրաստ կրքոտությամբ նվիրվել: «The Adjuster» («Կարգավորողը») ֆիլմն այդպիսի կրքոտությամբ է նկարահանված: Դիտելիս կարող եք դա զգալ», ասել է կանադահայ հայտնի կինոռեժիսոր **Ատոմ Էգոյանը**, որը վերջերս Օտտավայում ներկա է գտնվել 1991-ին թողարկված այդ ֆիլմի վերաբերյալ կանադական ֆիլմերի ինստիտուտի ռեկտոր Թոմ ՄկՍորլիի գրքի շնորհանդեսին: Տորոնտոյի համալսարանի հրատարակչատան լույս ընծայած այդ գիրքը կանադական ֆիլմերի քննարկմանը նվիրված շարքի հերթական հատորներից է, որը ֆիլմը դիտարկում է որպես «ջրբաժան գիծ» կամ «անկյունադարձային» կանադական ֆիլմերի պատմության մեջ: Ապահովագրական ընկերության գործակալի եւ հաճախորդների հետ նրա հարաբերությունների մասին պատմող այդ ֆիլմում հանդես են եկել Էլիաս Կոտեասը, Մորի Չայկինը, Ջենիֆեր Դեյլը, Դոն ՄկՔելլարը եւ Արսինե Խանջյանը:



«Ֆիլմում առկա անորոշությունը եւ առեղծվածային մթնոլորտն իր զարգացումն էր ապրելու Էգոյանի հետագա ֆիլմերում», նշել է գրքի հեղինակ **Թոմ ՄկՍորլին**:

«Կռունկ» ինտերնետային էջից տեղեկանում ենք, որ Էգոյանը, վերհիշելով ֆիլմի նկարահանման պատմությունը, ասել է, որ «դա առանձնաշնորհյալ ժամանակահատված էր», երբ ընդհանուր առմամբ ֆիլմեր էին նկարահանվում ֆինանսական օգուտ բերելու, այլ ոչ թե արվեստի գործեր ստեղծելու համար: Չնայած դրան, նրա «Family Viewing» («Ընտանեկան դիտում») ֆիլմը ընտրվել էր մասսայական ցուցադրության համար:

«The Adjuster»-ը հիմնված է անձնական փորձառության վրա, երբ Վիկտորիայում գտնվող իր տունն ու կահույքի խանութը հրո ճարակ է դարձել եւ ապահովագրական գործակալը եկել է գնահատելու վնասը: «Հիմա երեւի թե հնարավոր չէ այդպիսի ֆիլմ նկարահանել», ասել է Էգոյանը: «Խնդիրն այն է, որ երիտասարդ կինոգործիչները անմիջականորեն համբավ են ակնկալում եւ «You Tube»-ի առկայության պայմաններում կարողանում են իրենց ֆիլմերը շատ մարդկանց հասանելի դարձնել: Ամբողջ հարցն այն է, թե ինչքան դրական արձագանքներ կստանան:

Այսօրվա աշխարհում, ես բնավ չգիտեմ, թե ի՞նչ դերակատարում կունենամ կամ ի՞նչ կդառնամ», խոստովանել է Էգոյանը, որն այս տարվա հուլիսին կդառնա 50 տարեկան, եւ որի նոր` «Քլոե» ֆիլմի ցուցադրումները կսկսվեն մարտից:

Ամանդա Սեյֆրիդի, Ջուլիաննա Մուրի եւ Լայըմ Նիսոնի մասնակցությամբ այս ֆիլմը պատմում է մի կնոջ մասին, որն ամուսնուն դավաճանության մեջ կասկածելով, մի պոռնիկի է վարձում` նրան գայթակղելու համար: Դա Էգոյանի սցենարը չէ, այլ ֆրանսիական մի հին ֆիլմի «ռիմեյքը»: Նրան որպես ռեժիսոր վարձել է պրոդյուսեր Իվան Ռայթմանը: Էգոյանը նման «հրավերներ» հաճախ է ստանում հատկապես 1994-ին «Էկզոտիկա» ֆիլմի բերած դրամարկղային հաջողությունից հետո: Վերհիշելով իր կյանքում 23-ամյա վաղեմություն ունեցող այդ ժամանակահատվածը, երբ նոր էր բացահայտում սեքսի եւ ճշմարտության, դիտողի եւ դիտարկվողի երկակի երեւույթները, Էգոյանը խոսել է «խայթող մեղուների տեսարանը» նկարահանելու մասին, երբ փող վաստակելու համար զբաղված էր հեռուստատեսային սերիալներ («Մթնշաղի գոտին», «Ալֆրեդ Հիչքոքը ներկայացնում է» եւ այլն) նկարահանելով:

«Մի մոլագար պետք է մի ամբողջ մեղվապարս գցեր այն ապրանքատար մեքենայի մեջ, որտեղ մի երիտասարդ կին խայթոցներին չդիմանալով պետք է բղավեր: Ես խնդրեցի օպերատորին, որ այդ տեսարանը ավտոմեքենայի միջից նկարի, բայց նա մերժեց: Չցանկանալով հետաձգել նկարահանումը, ստիպված եղա ինքս ցատկել մեքենայի մեջ եւ նկարահանել: Կինը սկսեց բղավել: Ես սկսեցի շարժվել մեղուների նման: Ինձ ամբողջովին կորցրել էի: Չգիտեի որտեղ եմ գտնվում»:

Էգոյանի համար ամենախառնաշփոթ տարին 1994 թվականն էր, երբ Լոս Անջելես էր տեղափոխվել` «Ուորներ» կինոստուդիայում «թրիլլեր» նկարահանելու: Գործադիրների, դերասան-դերասանուհիների հետ հանդիպումներից հետո հասկացել էր, որ այնտեղ չի կարող ֆիլմ նկարահանել, քանի որ տարբեր մարդկանց քմահաճույքներին «զոհ գնալով» սցենարը անընդհատ պետք է փոփոխության ենթարկվեր, «զարգացում ապրեր»: Ոգեւորությունը հիասթափության էր վերածվել ու պատրաստվել էր վերադառնալ Կանադա: Սակայն դրությունը փոքր ինչ փրկել էր ամերիկացի գրող Ռասել Բենքսը` առաջարկելով էկրանավորել իր «Գեղեցիկ ապագա» վեպը: Էգոյանը կրքոտությամբ ձեռնամուխ եղավ այդ գործին, եւ 1997-ին այդ ֆիլմը 2 անվանակարգերում (լավագույն սցենար եւ լավագույն ռեժիսորական աշխատանք) ներկայացվեց Օսկարի մրցանակաբաշխությանը:

«50 ամյակիս շեմին առավել շրջահայաց պետք է լինեմ եւ ժամանակ չվատնեմ այնպիսի գործի վրա, որը չեմ կարող ավարտին հասցնել: Իմ դյուրազգացությունը որպես գրողի, կամ սցենարիստի ուղղակի արտասովոր է: Հասկանում եմ, որ իմ ֆիլմերի հանդիսատեսը տարբեր է, գուցե ավելի սահմանափակ մյուս ռեժիսորների ֆիլմերի հանդիսատեսից», նշել է Էգոյանը: Ֆիլմ նկարահանելուց բացի, նա զբաղվում է արվեստի այլ ծրագրեր մշակելով, ինչպես օրինակ, Տորոնտոյի միջազգային կինոփառատոնի նոր շենքերի` «Բել Լայթբոքսի» եւ «Ֆեստիվալ Թաուերի» համար սարքավորումներ ձեռք բերելով: Այստեղ եւս նրա համար կարեւորը գործին սիրով եւ խանդավառությամբ նվիրվելն է: Դա հենց այն է, ինչ զգում եւ գնահատում է Էգոյանի հանդիսատեսը նրա ամեն մի նոր գործում:

Պատրաստեց`
Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

## Փարաջանովի ֆիլմերը կցուցադրվեն Մեծ Բրիտանիայում

Փետրվարի 22-ից մինչեւ մայիսի 9-ը Լոնդոնում եւ Բրիստոլում կցուցադրվեն Սերգեյ Փարաջանովի ֆիլմերը: Փառատոնի կազմակերպիչը «Նովոստի-Արմենիա» գործակալությանը հայտնել է, որ Arnolfini ժամանակակից արվեստի թանգարանում տեղի կունենա ռեժիսորի ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը, Բրիստոլի պատկերասրահում կբացվի լուսանկարչական ցուցահանդեսը, հայկական Սբ Եղիշե եկեղեցում տեղի կունենա համերգ: Փարաջանովի արվեստով զբաղվող մասնագետները հանդես կգան զեկուցումներով` բրիտանացիներին ներկայացնելու Փարաջանովի ժառանգության արժեքն ու համաշխարհային կինոյում ունեցած կշիռը:

## «Տարվա լավագույն ֆիլմ» անվանակարգում «Օսկարի» է ներկայացվել 10 ֆիլմ

1943 թվականից ի վեր սա առաջին դեպքն է, որ տարվա լավագույն ֆիլմ անվանակարգում «Օսկարի» է ներկայացվել է ոչ թե 5, այլ 10 ֆիլմ: Իր այս որոշումը Ամերիկայի կինոակադեմիան բացատրել է մրցակցությունն ուժեղացնելու նկատառումով:

«Օսկարի» համար ամենաուժեղ պայքարը երկու ֆիլմերի միջեւ է` Ջեյմս Կեմերոնի «Ավատարի» եւ Կետրին Բիգելոուի «Հողմերի տիրակալը»: Նրանցից ամեն մեկը «Օսկարի» է հավակնում միանգամից 9 անվանակարգում: Այս երկու ռեժիսորների ֆիլմերը սուր պայքարի մեջ էին նաեւ «Ոսկե գլոբուս» մրցանակաբաշխության ժամանակ եւ հաղթողը դարձավ «Ավատարը»:

«Օսկարի» ցուցակում են հայտնվել նաեւ Փիթեր Ջեքսոնի «9-րդ շրջան», Ջոնաս Ռիվերայի «Դեպի վեր», Քվենտին Տարանտինոյի «Անփառունակ սրիկաները», Ջեյսոն Ռայթմանի «Դեպի երկինք», Լի Դենիելսի «Թանկագինը», Իտեն եւ Ջոել Կոենների «Լուրջ մարդը», Լոնե Շերֆիգի «Ուսուցում», Ջոն Լի Հենկոկի «Անտեսանելի ճանապարհը»:

«Օսկարի» 82-րդ մրցանակաբաշխությունը տեղի կունենա մարտի 7-ին, Լոս Անջելեսում:

## 2 մլրդ դոլար եկամուտ բերած «Ավատարը» շարունակություն կունենա

Ջեյմս Կեմերոնի «Ավատար» ֆիլմի գլխապտույտ հաջողությունից հետո «20-րդ դար Ֆոքս» կինոընկերության տնօրեն, մեդիամագնատ Ռուպերտ Մերդոկը Հոլիվուդում նախաձեռնել է ֆիլմի շարունակությունը նկարահանելու աշխատանքները: «Հոլիվուդ ռեփորտերի» թղթակցին նա հայտնել է, որ Կեմերոնը մի քանի նոր գաղափարներ է հղացել, որոնցից մեկը արժանացել է կինոընկերության հավանությանը: Մերդոկը նաեւ ասել է, որ ֆիլմի նկարահանումները շատ երկար կտեւեն, քանի որ Կեմերոնը սովորաբար ստեղծագործում է բավականին դանդաղ եւ բծախնդրորեն:

Ռ. Պ.

ԴԵՄՔԵՐ

# Սյուզան Սարանդոն. ցանկահարույց, միայնակ եւ 63 տարեկան

Ոչ բոլոր դերասանուհիներն են պատրաստ խաղալու հմայիչ ծեր կնոջ դեր: Սակայն 63-ամյա Սյուզան Սարանդոնը չի վախենում ծերանալուց: Իր նոր ֆիլմի` «The Lovely Bones» («Գեղեցիկ ոսկորներ») պրեմիերայից առաջ դերասանուհին «Գարդիանի» թղթակցին պատմել է, թե ինչո՞ւ ամուսնությունն իր համար չէ եւ ինչո՞ւ է ծիծաղը երիտասարդություն պարգեւում: Առաջին հատկանիշը, որ նկատում ես Սյուզան Սարանդոնի մեջ, այն է, թե որքան ներդաշնակ է նա: Ահա նստած է բազկաթոռին` «Քլարիջ» հյուրանոցում ու զարմանում է, թե ինչո՞ւ է կանաչ թեյը շագանակագույն: Նրա մաշկն անթերի է, աչքերը` խոշոր եւ անհատակ: Նա չի վախենում նայել դիմացինին ու չի էլ խուսափում օտար հայացքներից: Նա կին է, ով չի վախենում սեփական կարծիքը բարձրաձայնելուց: Խիզախությունն է, որ նրան դարձնում է սեքսուալ ամենի մի տարիքում, անկախ այն հանգամանքից լեսբիական սիրո տեսարան է խաղում Քեթրին Դենյովի հետ («The Hunger» «Սով»), թե՞ մարմնավորում է ծեր կնոջը «The Lovely Bones» («Գեղեցիկ ոսկորներ») ֆիլմում: Նա «Օսկար» ստացավ «Dead Man Walking» («Մահացածը քայլելիս») կինոնկարում միանձնուհուն մարմնավորելու համար: Նրա կարիերան վերելք ապրեց «The Rocky Horror Picture Show»-ից («Քարե սարսափի ֆիլմը») հետո: Դրան հաջորդեց Բրուք Շիլդսի հարբեցող մոր դերը «Pretty Baby» («Անուշիկ երեխան») կինոնկարում եւ երկար ու տանջալից սիրավեպը ֆիլմի ռեժիսոր Լուիս Մալլի հետ: Նա մասնագիտացել է մոր դերի բոլոր նրբություններում` դարձնելով այն ուժեղ, ցանկահարույց եւ ոչ սենտիմենտալ: Լավագույն օրինակը «Stepmom» («Խորթ մայրը») ֆիլմում քաղցկեղով հիվանդ մոր դերն էր, ուր նա մարմնավորում էր չհանձնվող կնոջ կերպարը:



Դերասանուհին նայում է իր կանաչ-շագանակագույն թեյին ու շարունակում. «Ես տոնեցի իմ 63-ամյակը եւ արյան թեստ հանձնեցի, հանդիպեցի դիետոլոգի: Այժմ հրաժարվել եմ շաքարից, հացից եւ ալկոհոլից»: Սարանդոնը հետաքրքրասեր է եւ անկաշկանդ: Երբեմն նա չի կարող լռել, քանի որ այդպես է պահանջում քաղաքավարությունը: Մի անգամ ասաց, որ ցանկանում է լինել ամենաերկար աշխատող դերասանուհին: Շատ է աշխատում, բայց կարիք չունի աստղային դերի, ձգտում է հետաքրքրական կերպարներ մարմնավորել: Սիրում էր աշխատել Փիթեր Ջեքսոնի հետ «The Lovely Bones» -ում, քանի որ վերջինս հստակ գիտեր, թե ինչ է ուզում: «Դա իրոք շատ լավ փորձ էր: Դու պարտավոր չես ընկերանալ բոլորի հետ, բայց եթե նրանք փորձառու են, պարտավոր ես հարգել նրանց»:

«Երբ խաղում էի «Dead Man Walking» կինոնկարում, մարդիկ ակնկալում էին, որ ես սիրավեպ կսկսեի ֆիլմի հերոսի հետ ու նա չէր մահանա: Այդ դեպքում ֆիլմի ողջ սյուժեն այլ ընթացք կստանար: Ես մնացի միանձնուհի, իսկ Շոն Պենի հերոսը մահացավ, ու դա, անշուշտ, հրաշալի լուծում էր»: Արդյո՞ք «The Lovely Bones»-ը ստիպեց նրան մտածել անմահության մասին:«Ես միշտ եմ մտածում այդ մասին», նշում է դերասանուհին: Նա հեռախոսից չի ջնջում մահացած մարդկանց համարներն ու պահում է նրանց նվերները: Արդյո՞ք հավատում է հոգու վերամարմնավորմանը: «Միգուցե՞, վստահ չեմ: Միակ հանգամանքը, որ ինձ ստիպում է հավատալ հոգու վերամարմնավորմանն այն է, որ կարծես երեխաներիս ճանաչել եմ նրանց ծնվելուց առաջ: Երբ աղջիկս` Եվան, երեք տարեկան էր, հարցրեց, թե ե՞րբ ենք առաջին անգամ հանդիպել: Ես սկսեցի նրան պատմել, թե նա ինչպես է ծնվել, իսկ նա ընդհատեց ասելով, որ հիշում է, թե ինչպես է ինձ որպես իր մայր ընտրել»:

Առաջին անգամ Սարանդոնը մոր դեր է խաղացել 32 տարեկանում: Նույնիսկ ցավը նա ներկայացնում է ինչպես բանաստեղծական փորձ: Նրա սիրավեպը Լուիս Մալլի հետ տանջալից էր: Լուիսը ռեժիսոր էր, Սյուզանը` դերասանուհի: «Ես շատ բան եմ սովորել նրանից, որովհետեւ նա Ֆրանսիայից էր եւ ավելի մեծահասակ: Երբեւէ չեմ զղջացել որեւէ հարաբերության համար, միշտ հավատացել եմ, որ տղամարդիկ եղել են իմ կյանքում, որովհետեւ այդպես էր պետք»: Սարանդոնն ասում է, որ պատրաստվում է փոխել ամեն ինչ: «Ես հրաշալի կյանք եմ ապրել, բայց ցանկանում եմ կրկին հայտնաբերել ինձ»:

Նա լքեց ընտանիքը Վաշինգտոնի Կաթոլիկ համալսարան հաճախելու համար: «Ես շատ ամաչկոտ էի, բայց գիտեի, որ ինչ որ հրաշալի կյանք կար դրսում: Այդ պատճառով հեռացա տնից»:

Նա ամուսնացավ միայն մեկ անգամ եւ ոչ Եվայի հոր` ռեժիսոր Ֆրանկո Ամուրիի հետ:

Հետագայում` 1988-ին, Սարանդոնը հանդիպեց Թիմ Ռոբբինսին, ում հետ նույնպես չամուսնացավ: Դերասանուհու խոսքերով, ամուսնության ինստիտուտն իր համար չէ:

Արդյո՞ք մտածում է, որ Թիմն իր կողքին կլինի հավերժ: «Ես գաղափար չունեմ դրա մասին ու չեմ էլ ցանկանում խոսել այդ թեմայից»: Դերասանուհու ժպիտն անհետանում է:

Մի քանի շաբաթ անց բլոգերից մեկում գրեցին. «Սյուզան Սարանդոնը և Թիմ Ռոբբինսը բաժանվել են: Աշխարհի վերջն է եկե՞լ»: Սարանդոնը երբեք չի կարողացել ապրել կարծրատիպերով: Նա սեքսուալ ու զվարճալի է ֆիլմերում եւ հենց դա է նրա նպատակը ` չդառնալ ողբերգական: Հրաշալի տեսք ունի, քանի որ հետեւում է իրեն: «Վերջերս ինձ հարցրեցին, արդյո՞ք մտածում եմ ծերության մասին: Եվ ես պատասխանեցի` «Արդյո՞ք մենք այլընտրանք ունենք», ասում է դերասանուհին: Բնավ դեմ չէ պլաստիկ վիրահատություններին, բայց իր համար տարօրինակ է 20 տարեկանի տեսք ունեցող 60-ամյա կինը: «Երիտասարդ դերասանները հաճախ են հարցնում, ո՞րն է իմ մաշկի թարմության գաղտնիքը: Առաջին հերթին դադարեք ծխել: Արեք այն, ինչ ձեզ հաճույք է պատճառում ու հաճախ ժպտացեք ու ծիծաղեք: Շրջապատեք ձեզ միայն դրական մարդկանցով: Ատելությունը վնասակար է մաշկին», ասում է Սարանդոնը:

Խոսակցություններ են պտտվում «Օսկար» ստանալու մասին` «The Lovely Bones» ֆիլմում խաղացած դերի համար: «Դա ինձ շատ է դուր գալիս», ասում է դերասանուհին առանց ձեւականությունների: «Դեր խաղալն այնքան էլ բարդ չէ, դժվարն անհատականություն մնալն է»:

Ըստ «Գարդիանի» պատրաստեց
ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 2/5/2010 10:51 PM Page 1





# Եվրոպան սպասում է վիճակահանությանը

## Փետրվարի 7-ին հայտնի կդառնան ՀՀ հավաքականի մրցակիցները

Վաղը Վարշավայում Երեւանի ժամանակով 15-ին կսկսվի ֆուտբոլի Եվրոպայի 2012-ի առաջնության ընտրական մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը: Եվրոպական 51 հավաքականները ըստ ՈւԵՖԱ-ի վարկանիշային աղյուսակի նախապես բաշխվել են 6 զամբյուղներում: Հայաստանի հավաքականը նախավերջին՝ 5-րդ զամբյուղում է, որտեղ ընդգրկված են նաեւ Չեռնոգորիայի, Ալբանիայի, Էստոնիայի, Վրաստանի, Մոլդովայի, Իսլանդիայի, Ղազախստանի եւ Լիխտենշտեյնի ընտրանիները: Դա նշանակում է, որ հայ ֆուտբոլիստները նշված հավաքականներից եւ ոչ մեկի հետ նույն խմբում չեն հայտնվի:

Վիճակահանությամբ կկազմավորվեն ընտրական 9 խմբեր: Դրանցից 6-ում կլինեն 6-ական, 3-ում՝ 5-ական հավաքականներ: Բնականաբար, Հայաստանի հավաքականին ավելի ձեռնտու կլինի ընդգրկվել 6 թիմանոց խմբում: Այդ դեպքում նախ մեր ընտրանին 10 խաղ կանցկացնի, ապա եւ խմբում գոնե մեկ թույլ մրցակից կունենա հանձինս 6-րդ զամբյուղում ընդգրկված հավաքականներից մեկի: Այդ զամբյուղում են Ադրբեջանի, Լյուքսեմբուրգի, Մալթայի, Ֆարերների, Անդորրայի եւ Սան Մարինոյի հավաքականները: Ընդ որում ՈւԵՖԱ-ն նախապես հայտարարել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի հավաքականները միեւնույն խմբում չեն ընդգրկվի: 6-րդ խմբից մեր հավաքականի համար ավելի նախընտրելի են Անդորրայի, Սան Մարինոյի եւ Մալթայի ընտրանիները:

Ընտրական խմբերը կգլխավորեն 1-ին զամբյուղում ընդգրկված հավաքականները: Այստեղ են Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի, Գերմանիայի, Հոլանդիայի, Իտալիայի, Անգլիայի, Խորվաթիայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հավաքականները: Մեր հավաքականն այս խմբից առայժմ չի մրցել Անգլիայի, Իտալիայի եւ Խորվաթիայի ֆուտբոլիստների հետ: Ֆուտբոլասերներից շատերը նախընտրում են անգլիացիներին՝ երազելով Երեւանում տեսնել անգլիական ֆուտբոլի «աստղերին»:


ՖՈՏՈԼՈՒՐ

Իհարկե, եթե հաշվի առնենք, որ Հայաստանի հավաքականն անկախ մրցակիցներից, այս անգամ էլ չի կարող պայքարել եզրափակիչ փուլի ուղեգրերի համար, ապա կարելի է հասկանալ ֆուտբոլասերներին: Ֆինանսական առումով էլ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային է ձեռնտու, որ մեր ընտրանին ընդգրկվի ուժեղ խմբում: Այդ դեպքում հնարավոր կլինի ՀՀ հավաքականի հանդիպումների ցուցադրման հեռուստաիրավունքը վաճառել ավելի բարձր գնով:

2-րդ զամբյուղում ընդգրկված են Հունաստանի, Չեխիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Սերբիայի, Թուրքիայի, Դանիայի, Սլովակիայի եւ Ռումինիայի հավաքականները: Բացառված չէ, որ կրկին թուրքերը մեզ մրցակից դառնան: Վերջին շրջանում Հայաստանի եւ Թուրքիայի տարբեր տարիքային հավաքականները հաճախ են միեւնույն ընտրական խմբում հայտնվում:

3-րդ զամբյուղից մեր հավաքականին կարող է բաժին ընկնել հետեւյալ ընտրանիներից մեկը. Իսրայել, Բուլղարիա, Ֆինլանդիա, Նորվեգիա, Իռլանդիա, Շոտլանդիա, Հս. Իռլանդիա, Ավստրիա, Բոսնիա:

4-րդ զամբյուղում բաշխվել են Սլովենիայի, Լատվիայի, Հունգարիայի, Լիտվայի, Բելառուսի, Բելգիայի, Ուելսի, Մակեդոնիայի եւ Կիպրոսի հավաքականները:

Վարշավայում անցկացվելիք վիճակահանությանը Հայաստանից ներկա կգտնվեն ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը, գործադիր տնօրեն Արմեն Մինասյանը եւ ազգային հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնակատար Վարդան Մինասյանը: Վերջինիս հետագա ճակատագիրը շատ բանով պայմանավորված է վիճակահանության արդյունքներով: Ինչպես հայտնի է, ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը հերթական անգամ ազգային հավաքականի գլխավոր մարզչի որոնումների մեջ է: Հավաքականը մարզելու առաջարկ էր արվել Սերխիո Մարգարյանին, սակայն վերջինս հրաժարվել էր: Բացառված չէ, որ հավաքականի ղեկը թողնվի Վարդան Մինասյանին: Ամեն դեպքում մինչեւ աշնանը մեկնարկող Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարը դեռեւս բավական ժամանակ կա, ուստի ՀՖՖ ղեկավարությունը հանգիստ կարող է շարունակել որոնումները:

Ինչպես հայտնի է, մարտի 3-ը ՖԻՖԱ-ի խաղացանկով ընկերական հանդիպումների անցկացման օր է: Հայաստանի հավաքականն առայժմ մրցակից չունի: Բացառված չէ, որ հենց վիճակահանության ժամանակ, Վարշավայում մեր պատվիրակությանը կհաջողվի պայմանավորվել որեւէ հավաքականի հետ այդ օրն ընկերական մրցախաղ անցկացնելու վերաբերյալ:

# Հիդինգը կաշխատի Ռուսաստանում մինչեւ պայմանագրի ավարտը

ՌԴ ֆուտբոլային միության նախագահ Սերգեյ Ֆուրսենկոյի եւ Ռուսաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Գուս Հիդինգի հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ վերջինս մինչեւ պայմանագրի ժամկետի ավարտը պետք է շարունակի աշխատանքը: Իսկ թե ի՞նչ է սպասում Հիդինգին պայմանագրի ժամկետի ավարտից հետո, այդ հարցը չի քննարկվել: Իհարկե, բացառված չէ, որ այդ հարցին Ֆուրսենկոն եւ Հիդինգն անդրադառնան Վարշավայում կայանալիք վիճակահանությունից հետո:

Հիդինգը Ռուսաստանում տարեկան 7 մլն եվրո աշխատավարձ է ստանում: Մինչեւ անցած տարվա վերջը նրան աշխատավարձը վճարում էր Ռոման Աբրամովիչի կողմից ֆինանսավորվող ֆուտբոլի ազգային ակադեմիան: Մասնագետներից շատերի կարծիքով, եթե հուլիսին Հիդինգը երկարաձգի պայմանագիրը, ապա նախկինի համեմատ նրան ավելի քիչ աշխատավարձ կառաջարկվի: Իսկ թե ինչպիսի՞ն կլինի Հիդինգի արձագանքը, դժվար է ենթադրել: Ամեն դեպքում հոլանդացի մասնագետը բազում առաջարկներ ունի տարբեր թիմերից եւ հավաքականներից, ուստի ընտրության լայն հնարավորություն կունենա:

# Ֆուտբոլային «աստղերը» հավաքվել են Մոսկվայում

Այսօր Մոսկվայում կտրվի ֆուտբոլի «Լեգենդների գավաթ» միջազգային 2-րդ մրցաշարի մեկնարկը: Գլխավոր մրցանակը կվիճարկեն 6 հավաքականներ, որոնք նախնական փուլում բաժանվել են 2 խմբի: Առաջին խմբում ընդգրկված են Իսպանիայի, Իտալիայի եւ Գերմանիայի հավաքականները, երկրորդում հանդես կգան Ռուսաստանի, Հոլանդիայի եւ Պորտուգալիայի ընտրանիները:

Մոսկվայում հանդես կգան մեծ ֆուտբոլին հրաժեշտ տված անվանի մի շարք ֆուտբոլիստներ, որոնց թվում կլինեն Ամավիսկան, Դեմետրիո Ալբերտինին, Լուիջի դի Բաջոն, Ֆեռնանդո Կոուտուն, Ռուդ Գուլիտը, Ռոնալդ դե Բուրը, Լոթար Մաթեուսը:

Անցյալ տարի հաղթող էր ճանաչվել Ռուսաստանի հավաքականը, որի կազմում այս անգամ հանդես չեն գա Վալերի Կարպինն ու Վիկտոր Օնոպկոն: Փոխարենը կխաղան Վլադիմիր Բեսչաստնիխը, Դմիտրի Խլեստովը, Ալեքսեյ Սմերտինը, Դմիտրի Ալենիչեւը, Ալեքսանդր Ֆիլիմոնովը:



ՇԱԽՄԱՏ

# Դավիթ Շահինյանը հիացնում է իր տպավորիչ արդյունքով

Մոսկվայում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում պարզապես գերազանց է խաղում Դավիթ Շահինյանը: Նա 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Կոնստանտին Բրոննիկովի նկատմամբ: 6 տուրից հետո Դավիթը նույնքան միավորով Ալեքսանդր Կոտովի հետ գլխավորում է «B» խմբի մրցաշարային աղյուսակը: Վերջինս եւս հաղթեց՝ պարտության մատնելով Նիկոլայ Կրիվոնոսին: 7-րդ տուրում առաջատարները մրցելու են միմյանց հետ: Հաղթանակի դեպքում Դավիթ Շահինյանը գլխավոր մրցանակի լուրջ հայտ կներկայացնի:

Տուրը հաջող էր նաեւ առաջատարներին հետապնդող Տիգրան Ս. Պետրոսյանի եւ Տիգրան Սիմոնյանի համար: Նրանք իրենց օգտին հաղթանակներ գրանցեցին համապատասխանաբար Լեոնիդ Օկունի եւ Ալեքսանդր Կուզմիչովի հետ պարտիաներում: Հայաստանցի շախմատիստները վաստակել են 5 միավոր: Նույնքան միավոր ունի նաեւ Ռուսաստանը ներկայացնող Լազար Բեգլարյանը, որը հաղթեց Եվգենի Պերեդնիչին: Հաղթելով Յուրի Ալտուխովին, Հայկ Գալստյանը վաստակեց 4 միավոր: Իսկ ահա Տիգրան Հարությունյանը, որ 3 միավոր ուներ, պարտվեց Վլադիմիր Կոզլովին:

Կանանց մրցաշարում Լիլիթ Գալոյանը 5 միավորով 7 շախմատիստուհիների հետ գլխավորում է աղյուսակը: 6-րդ տուրում նրա մրցակցուհին առաջատարներից մեկն էր՝ գերմանուհի Էլիզաբեթ Պյոտչը: Վերջինիս հաջողվեց ընդհատել Լիլիթի 4 անընդմեջ հաղթանակների շարքը ու կես միավոր վաստակել:

Ռուսաստանցի Կարինա Համբարձումովան հաղթեց միջազգային վարպետ Իլենա Կրասենկովային ու վաստակեց 4 միավոր: Իսկ Մարինա Նազարյանը պարտվեց Յուլիա Մալյուտինային: Մարինան անհաջող է խաղում՝ իր օգտին գրանցելով ընդամենը 1,5 միավոր:

Ուժեղագույնների մրցաշարում հանդես եկող Աղասի Ինանցը 2-րդ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Ալեքսանդր Ֆիլիպենկոյի նկատմամբ: Աղասին վաստակեց 2,5 միավոր ու մի փոքր բարելավեց մրցաշարային իրավիճակը:

5-ական միավորով աղյուսակը գլխավորում են ռուսաստանցիներ Եվգենի Բարեեւը, Դմիտրի Անդրեյկինը, Իգոր Կուռնոսովը, հնդիկ շախմատիստ Կրիշնան Սասիկիրանը եւ վիետնամցի Լիմ Լե Քվանգը: Ռուսաստանը ներկայացնող Արթուր Գաբրիելյանը 4,5 միավորով առաջատարներին հետապնդող խմբի մեջ է:

# Սերգեյ Մովսիսյանը հաղթողների թվում է

Վերջնագիծը հատեց շախմատի Ջիբրալթարի մրցաշարը, որին մասնակցում էին 218 շախմատիստներ: Ավարտական տուրից առաջ 4 շախմատիստներ, որոնց թվում էր նաեւ Սերգեյ Մովսիսյանը, 7 միավորով գլխավորում էին աղյուսակը: 10-րդ տուրում նրանք մրցեցին միմյանց հետ: Մովսիսյանը սեւերով հաշտություն կնքեց Յան Գուստաֆսոնի հետ, իսկ Ֆրանսիսկո Վալյեխոն ոչ-ոքի խաղաց Մայքլ Ադամսի հետ: Արդյունքում չորսն էլ վաստակեցին 7,5-ական միավոր: Հաղթանակներ տոնելով, նրանց միացան նաեւ հնդիկ շախմատիստներ Գոպալ Գեսան ու Չանդա Սանդիպանը, ԱՄՆ-ը ներկայացնող Գատա Կամսկին ու Ալեքս Լենդերմանը եւ ֆրանսիացի Էթիեն Բաքրոն:



Հաղթողին որոշելու համար հարկ եղավ դիմել լրացուցիչ գործակիցների օգնությանը: Այդ ցուցանիշով լավագույնը Գերմանիան ներկայացնող Յան Գուստաֆսոնն էր, 2-3-րդ տեղերը զբաղեցրին Մայքլ Ադամսն ու Ֆրանսիսկո Վալյեխոն: Իսկ Սերգեյ Մովսիսյանը գրավեց 7-րդ տեղը:

# «Բանանցը» սկսեց հաղթանակով

Անթալիայում ուսումնամարզական հավաք անցկացնող «Բանանցի» ֆուտբոլիստները ստուգողական առաջին խաղում խոշոր՝ 5-1 հաշվով պարտության մատնեցին Ռումինիայի 1-ին խմբի առաջնությունում հանդես եկող Կոնստանցիայի «Ֆարուլին»:

Արդեն առաջին խաղակեսում Բետոն, Սամվել Մելքոնյանն ու Արարատ Առաքելյանը 3 անգամ գրավեցին մրցակցի դարպասը: Ընդմիջումից հետո աչքի ընկան «Բանանցի» երիտասարդ ֆուտբոլիստներ Արմեն Զաքարյանն ու Ժորա Ստեփանյանը:

«Բանանցի» գլխավոր մարզիչ Ստեւիցա Կուզմանովսկին խաղի ընթացքում փորձարկեց բոլոր ֆուտբոլիստներին: «Բանանցը» խաղը սկսեց հետեւյալ կազմով. Ցվետոմիր Ցանկով, Նիկոլայ Նիկոլով, Էդուարդ Կակոսյան, Յարեմա Կավացիվ, Գագիկ Դաղբաշյան, Սամվել Մելքոնյան, Արարատ Առաքելյան, Արթուր Ոսկանյան, Բետո, Դուբալա, Արսեն Բալաբեկյան: Ընդմիջումից հետո խաղադաշտ մտան Տիգրան Դավթյանը, Հովհաննես Համբարձումյանը, Արմեն Զաքարյանը, Հրաչյա Եղիազարյանը, Ժորա Ստեփանյանը, Սարգիս Նասիբյանը, Նոա Կասուլեն, Վալտեր Պողոսյանն ու Սարգիս Կարապետյանը:

Հաջորդ հանդիպումը «Բանանցը» կանցկացնի փետրվարի 9-ին: Մեր թիմը կմրցի Խորվաթիայի բարձրագույն խմբի ներկայացուցիչ «Ռիեկայի» հետ:

# 100 հազար եվրո օլիմպիական չեմպիոնին

Ռուսաստանի սպորտի նախարարությունն ու ազգային օլիմպիական կոմիտեն սահմանել են Վանկուվերում կայանալիք ձմեռային օլիմպիադայի մրցանակակիրների պարգեւավճարների չափը: Օլիմպիական չեմպիոնները կպարգեւատրվեն 100 հազար եվրոյով, արծաթե մեդալակիրների պարգեւը կկազմի 60 հազար, իսկ բրոնզե մրցանակակիրները կստանան 40 հազար եվրո: Բացի այդ, օլիմպիական մարզիկների խրախուսման հիմնադրամը Վանկուվերում հաղթածներին ավտոմեքենաներ կնվիրի: Առանձին պարգեւատրություններ կիրականացնեն նաեւ տարբեր մարզաձեւերի ֆեդերացիաները:

AZG NEW PDF.qxd 2/5/2010 10:51 PM Page 1



# Զորի Բալայանի բաց դասը Կարբիի Վ. Թեքեյան դպրոցում

Ազգային հասարակական գործիչ, գրող-հրապարակախոս, սպորտի վարպետ, ճանապարհորդ **Զորի Հայկի Բալայանի** բազմաշերտ կերպարի, գործունեության, անկարելին կարելի դարձնելու մտահղացումների մասին շատ է գրվել ու խոսվել: Դրանց թվին երեկ ավելացավ եւս մեկը՝ բաց դաս Արագածոտնի մարզի Կարբի գյուղի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցում: «Երջանկությունը դա այն է, երբ իրականանում է երազանքդ», ասում է Ղարաբաղում ծնված կարբեցի Զորի Բալայանը: Դեռ մանկուց զրկվելով հորից, փոքրիկ Զորիի դաստիարակությունն իր վրա է վերցրել Մարկոս պապը, ու նրանից ժառանգած հայրենասիրությունն ու նվիրումն իր ազգին, ժողովրդին, պատմությանը դարձել է ուղեցույց 75-ամյակը բոլորած ծովագնաց Զորի Բալայանի ողջ կյանքում: Զորի Բալայանի երազանքներից մեկի վկաներն էին երեկ Կարբիի դպրոցում կազմակերպված յուրօրինակ ձեռնարկին:



**«Ազգի»** հետ զրույցում պրն Բալայանն ասաց. «Ես սովորաբար հարցազրույցներ չեմ տալիս, սակայն այս հանդիպումն իմ ցանկությամբ է կազմակերպվել, քանի որ այստեղ՝ Կարբիում ես ունեմ տուն, իմ «երկաթե լեդին»՝ գրամեքենան այստեղ է, եւ ես իմ 15 գրքերն այստեղ եմ գրել, նաեւ հաճախակի շփվել եմ այս դպրոցականների հետ: Երբ նավարկության ժամանակ հասել էինք հասարակածը, մեջս ցանկություն առաջացավ մի օր մտնել այս դպրոցը հենց այն պահին, երբ աշխարհագրության ուսուցչուհի Սեդա Հովհաննիսյանը վարում է հերթական դասը, նրանից վերցնել ցուցափայտը եւ շարունակել դասը՝ Ատլանտյան օվկիանոսի եւ հասարակածի մասին: Եվ ահա դուք ականատեսն եք, որ իմ այդ երազանքը իրականացավ: Դա է երջանկությունը»:

Միջոցառումը բացվեց դպրոցի տնօրեն Արսեն Օհանյանի ողջույնի խոսքով: Նա պատմեց, թե ինչպես ամիսներ առաջ հեռավոր Ատլանտյան օվկիանոսից ստացվել է նման հանդիպում անցկացնելու մասին:

Մեկ դասաժամ տեւած դասը հիացրել էր ներկա հյուրերին, որոնց թվում էին Արագածոտնի մարզի ղեկավար այրերը, Կարբիի գյուղապետ Ֆրունզե Նազարեթյանը, ՀՀ գյուղնախարար Գերասիմ Ալավերդյանը, ՀՀ եւ ԼՂՀ գրողների միության նախագահներ Լեւոն Անանյանը, Վարդան Հակոբյանը, Ռյազանի համալսարանի պրոֆեսոր, ակադեմիկոս Գյուլաբ Մարտիրոսյանը, բազմաթիվ այլ հյուրեր: Հին դասին հաջորդեց Զորի Բալայանի բաց դասը, որի ընթացքում պրն Բալայանը պատմական մի էքսկուրս անցկացրեց, ներկայացնելով հայ ժողովրդի պատմական, մշակույթի, լեզվի, հայոց գրերի ստեղծման Մեծ եղեռնից մինչեւ մեր օրերը: Իսկ քիչ անց աշխարհի քարտեզի վրա ցույց տվեց այն բոլոր ուղղությունները, որ հայկական «Կիլիկիա», այնուհետեւ՝ «Արմենիա» առագաստանավերով կտրել-անցել են հինգ մայր ցամաք, գետեր, օվկիանոսներ: Այդ ամենի մասին այնպիսի հպարտությամբ ու ոգեւորությամբ էր պատմում, որ դպրոցականները շունչները պահած, ուշի-ուշով լսում ու հպարտանում էին, որ օտար ափերում լողացող հայկական առագաստանավը, հայկական եռագույնով իրականացրել է անկարելին: Առանց ծովի մեր ծովագնացների սխրանքները դեռ երկար կմնան դպրոցականների հուշերում ու այդ օրվա բաց դասը կփոխանցվի սերունդներին:

Երկու դասաժամ տեւած Զորի Բալայանի դասը եզրափակվեց ծովագնացների առաջիկա ծրագրերի ներկայացմամբ: Դասի ավարտին դպրոցի սան Իգիթ Շահբազյանը Զորի Բալայանին նվիրեց իր ձեռքով պատրաստված «Կիլիկիա» առագաստանավի կրկնօրինակը:

Իրականացավ Զորի Բալայանի այս մեկ երազանքը: Մնաց մյուս երազանքը՝ թռիչք տիեզերքում:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**
**Կարբի-Երեւան**

ԲԱՔՈՒ

# Էլեկտրաէներգիայի դեֆիցիտ Ադրբեջանում

**Եղանակային փոփոխությունները Բաքվի իշխանություններին ու բնակիչներին տհաճ անակնկալներ են մատուցել: Ադրբեջանական պարբերականների փոխանցմամբ ձյուն մաքրող մեքենաները կարողացել են մաքրել միայն քաղաքի կենտրոնական փողոցները, դեպի մայրաքաղաք տանող մի շարք ճանապարհներ փակվել են:**

**Day.az-ի փոխանցմամբ, քաղաքում նախորդ օրը անհամեմատ աճել են ճանապարհային պատահարները, ավտովթարները:**

**Vesti.az էլեկտրոնային պարբերականի փոխանցմամբ էլ երեկ «երազների քաղաքի» մի շարք կարեւորագույն կառույցներ ողջ օրվա ընթացքում զրկված են եղել էլեկտրաէներգիայից: «Զարմացնում ու զայրացնում են գերատեսչությունների անտարբերությունն ու անփույթ աշխատանքը: Որեւէ մեկը պատասխանատվություն չի կրում, որ քաղաքի կարեւորագույն կառույցները՝ հիվանդանոց, պոլիկլինիկա, շտապ օգնության ծառայություն, դպրոցներ ու մանկապարտեզներ, զրկված են եղել էլեկտրաէներգիայից: Էներգետիկների անփույթ աշխատանքի պատճառով մայրաքաղաքը չկարողացավ դիմակայել եղանակային անակնկալներին: Ո՞վ է այս ամենի մեղավորը», հռետորական հարց է ուղղում պարբերականի լրագրողը:**



**Բաքվի վնասվածքաբանական հիվանդանոցում նկատվել է կոտրվածքներ ստացած մարդկանց հոսք: «Առավոտվանից աշխատում ենք առանց էլեկտրաէներգիայի: Մեզ մոտ են բերում կոտրվածքներ ստացած մարդկանց ողջ Բաքվից: Էլեկտրաէներգիայի անջատման պատճառով մենք անգամ չենք կարողանում ռենտգեն հետազոտություն իրականացնել: Հիվանդանոցում ջուր չունենք, վիճակը սարսափելի է, ստիպված ենք ամեն վայրկյան սխրագործություն անել մարդկանց կյանքը փրկելու համար», ասել է վնասվածքաբանական հիվանդանոցի տնօրենը:**

**Ավելի ուշ նույն պարբերականը հաղորդեց, որ էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով փետրվարի 6-ին շուրջ մեկ տասնյակ օրաթերթեր չեն հրապարակվի: Մասնավորապես թերթի աշխատակիցը զրուցել է Azadlig թերթի գլխավոր խմբագիր Ազեր Ախմեդովի հետ. վերջինս իր զայրույթն է արտահայտել քաղաքային իշխանությունների անփույթ աշխատանքի վերաբերյալ: Ամենայն հավանականությամբ չեն հրապարակվի նաեւ «Զերկալո», «Ենի մուսավաթ», «Էխո», «Բիզիմ Օհլ» թերթերը:**

**Էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով Բաքվի խանութներում նկատվել են հերթեր: «Մարդիկ մտնում են խանութներ, սրճարաններ, ոչ միայն մի բաժակ տաք սուրճ խմելու կամ թխվածք ուտելու, այլեւ տաքանալու, մինչեւ երթուղային տաքսին, որը շատ վատ է աշխատում, կգա», գրում է Vesti.az-ը:**

**Ավելի ուշ քաղաքի արվարձանների բնակիչները խուճապի են մատնվել, որովհետեւ խանութներում հնարավոր չէր գտնել հաց: Մի շարք գործարանների տնօրենները դա պարզաբանել են էլեկտրաէներգիայի բացակայությամբ:**

**Ի դեպ, էլեկտրաէներգիայի բացակայությունը ստիպել է, որ երկրի ֆուտբոլային առաջնության հերթական՝ 19-րդ փուլը մեկ շաբաթով հետաձգվի:**

**Հ. Հ.**

# Հաստատվել ամեն գնով

**Հայաստանից արտագաղթողները հիմնականում գնում են եվրոպական երկրներ ու ԱՄՆ: Ըստ վիճակագրության՝ Հայաստանից վերջին 20 տարիների ընթացքում արտագաղթել է 1 մլն մարդ: Արտագաղթն այսօր իրականացվում է տարբեր ձեւերով ու միջոցներով: Որեւէ երկրում հաստատվելու համար հաճախ մեր հայրենակիցները հնարավոր բոլոր ձեւերով վատաբանում, անվանարկում եւ տարբեր երկրների տարբեր ատյաններում ամենամռայլ գույներով են ներկայացնում Հայաստանը: Ոմանք ներկայանում են որպես կեղծ միասեռական, քաղաքական փախստական, աղանդավոր եւ այլն: Ի՞նչն է պատճառը, ինչո՞ւ են մեր հայրենակիցները հանուն փափուկ կյանքի վարկաբեկում իրենց հայրենիքը: Վրդովմունքս բխում է իրական հիմքերից: Էլեկտրոնային լրատվամիջոցներից մեկում աչքովս ընկավ մի «հետաքրքրական» նամակ, որում մասնավորապես ասված էր. «Ես՝ Արսեն Հախինյանս, խնդրում եմ քաղաքական ապաստարան, քանի որ իմ հայրենիքում՝ Հայաստանում հետապնդվել եւ ենթարկվել եմ ֆիզիկական ու հոգեկան ճնշման՝ իմ կրոնական պատկանելության պատճառով: Ես հիմնավորված մտավախություն ունեմ, որ իմ վերադառնալուն պես հետապնդումները կվերսկսվեն:**

**Ես եղել եմ Եհովայի վկա 1996-ից եւ այդ ժամանակից էլ նվիրված եմ իմ հավատքին: Դուք գիտեք որ Հայ առաքելական եկեղեցին ավանդորեն եղել եւ մնում է գերիշխող եւ օֆիցիալ ճանաչված կրոնը ՀՀ-ի տարածքում: Բոլոր այլ կրոնական կազմակերպությունները ու դրանց անդամները ոչ պաշտոնապես, բայց բացահայտ հալածվում եւ հետապնդվում էին: Մեր կազմակերպության հանդիպումները հիմնականում իրականանում էին գաղտնի, մեր քույրերից կամ եղբայրներից որեւէ մեկի տանը: Պարբերաբար փոխում էինք տեղը, քանի որ հիմնականում մեզ հալածում էին և՛ հարեւանները և՛ տվյալ շենքի բնակիչները: Նրանց ոչ բարյացակամ եւ հաճախ էլ թշնամական վերաբերմունքը մեր հավատքի ու նաեւ մեր նկատմամբ դառնում էր անհիմն արհամարհանքի, վիրավորանքի ու ծաղրի առիթ: Հավատացեք, որ դժվար է համակերպվել այն դաժանությանն ու արհամարական մոտեցմանը, ինչ վիրավորում է քո ամենասուրբ բանը՝ հավատքը: Մի՞թե մենք իրավունք չունեինք ազատորեն վայելելու մեր կրոնի՝ Եհովա աստծուն հավատալու մեր իրավունքը: Բացի բացահայտ արհամարանքից, մեզ քարկոծել եւ վախեցրել են, հաճախ էլ խլել մեր կրոնական գրականությունը: 1997-ի ամռանը, երբ ես ավարտեցի ԵՊՀ-ն, իմ վիճակն ավելի բարդացավ եւ դարձավ ավելի վտանգավոր: Օրենքի համաձայն, ավարտելուց հետո ես պետք է երկու տարի ծառայեի բանակում: Մյուս կողմից էլ՝ իմ հավատքը թույլ չէր տալիս ծառայել բանակում: Միակ փրկությունը ծառայելուց խուսափելն էր: Եվ դրա համար էլ ծնողներն օգնեցին ինձ վարձել մի բնակարան Երեւանի արվարձանում, որպեսզի կարողանամ թաքնվեմ այնտեղ աշնանային եւ գարնանային հավաքներից: Չնայած իմ ծնողները չէին ընդունում իմ հավատքը, նրանք երբեւէ փորձ չարեցին կասեցնելու այն: Ես շարունակում էի մասնակցել մեր հավաքներին, չնայած դա շատ վտանգավոր էր: Ես դուրս էի գալիս միայն լուսաբանվելու նպատակով: Մնացած ամբողջ ժամանակն անց էի կացնում տանը: 1999թ. ես ընդունվեցի Էկոնոմիկայի եւ բանկային համակարգի ինստիտուտ: Մնալով հավատարիմ մեր գործունեությանը եւ իմ Եհովայի վկայի սուրբ պարտքին, ես շարունակում էի քարոզել ուսանողների մեջ. քարոզչությունը միակ ձեւն էր մարդկանց համախմբելու Աստծո բանակին՝ գալիք Արմագեդդոնին դիմակայելու համար: Այդ ամբողջ ժամանակահատվածում ինձ անընդհատ քարկոծում եւ հալածում էին: Ես ապրում էի եւ ֆիզիկական եւ հոգեբանական մեծ ցնցում: Մի քանի անգամ ես քարոզչություն իրականացնելու պատճառով ենթարկվել եմ քրեական պատասխանատվության, ծեծի, անարգանքի ու հայհոյանքի: Իրավիճակը գնալով բարդանում էր, եւ ես որոշեցի մեկնել ԱՄՆ: Մեկնեցի ԱՄՆ, քանի որ դա էր միակ ճանապարհը՝ ապաստարան գտնելու եւ հետապնդումներից խուսափելու, վերջապես միանալու իմ քույրերին եւ եղբայրներին, որոնք արդեն այնտեղ էին: Ես ապաստարան եմ խնդրում, քանի որ դա միակ հնարավորությունն է խաղաղորեն քարոզելու իմ հավատքը առանց հետապնդման մտավախության»:**

**Ահա այսպես են ներկայացնում մեր երկրին ու մեր օրենքները օտար երկրներում ապաստան փնտրող որոշ հայեր, անձնական շահագրգռությամբ փորձելով վարկաբեկել իրենց:**

**ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**Մրցույթի հրավեր 030/10/PRO**

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ Եղեգնաձորի պետական քոլեջի գեղարվեստական փայտամշակման ուսումնական արհեստանոց հիմնելու համար սարքավորումների մատակարարում:

Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի http://www.undp.am ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ ս.թ. մարտի 1, ժամը 17:00:

UNDP




**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 05.02.2010 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 378.12 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 516.89 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 12.40 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 219.43 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 05.21.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: